

**ԹԹԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ**

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼԵՏՈՒՐԱՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

634.38.

7-17

ՍՏՈՒԿԱԾԵ Է 1981 Ք.

Թ.Ս.ԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Կազմեց և խմբագրեց
Ս.Բ. ԴԱՆԻՆԼՅԱՆ



117
A 18551

ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՐԱՆ

ՏՆԿԱՐԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԹԹԵՆՈՒ անկիները աճեցվում են ԹԹԵՆՈՒ, պտղա-
տու և անտառային տնկարաններում՝ ԹԹատաններ
կազմակերպելու նպատակով, որոնք հանդիսանում են
չերամապահության զարգացման հիմնական կերի բա-
զան. ուստի ամենալուրջ ուշադրություն պետք է
դարձնել տնկարանային տնտեսության ճիշտ կազմա-
կերպմանը և բարձր ազրոտելանիկային:

ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ԹԹԵՆՈՒ տնկարանի տեղի ընտրությունը կատա-
րելիս անհրաժեշտ է նկատի ունենալ տվյալ վայրը
բնորոշող մի շարք հիմնական պայմաններ.

1) Տեղի կլիման, 2) ուելեֆը, 3) հողը, 4) ոռո-
գող ջրի առկայությունը:

Տնկարանը պետք է համապատասխանի այն շրջան-
ների կլիմայական պայմաններին, որին նա հիմնակա-
նում սպասարկելու է:

Հողամասի ընտրության ժամանակ անհրաժեշտ է
ուշադրություն դարձնել, որ նա պաշտպանված լինի
քամիների ուժեղ հոսանքից և զարնանը այդ հողամա-
սում սառը օդ չկանգնի:

Նորմալ ջրումը, հողի մեքենայացված մշակումը

և բույսերի աճեցողութեան միատեսակութիւնն աշխատելու համար, տնկարանի հողամասի ունեցիչը պետք է հարթ լինի կամ աննշան թեքութիւն ունենա:

Թթենու տնկարանի հողը պետք է լինի թեթև, փխրուն, սննդանյութերով հարուստ. լավ են խորը կալապաղաղային հողերը:

Ստորերկրյա ջրերի, բարձրութիւնը մեկ մետրից ավելի չպիտի լինի: (Պետքական չեն ծանր, անստրուկտուր կալապին հողերը, աղոտները և խիստ քարոտ հողամասերը):

Հողամասը ամբողջ վեգետացիայի ընթացքում պետք է ջրով ապահովված լինի:

Տնկարաններն անհրաժեշտ է կազմակերպել խճուղիներին կից, սպասարկվող գոտու կենտրոնում և երկաթուղային կայարանի մոտ. այդ անհրաժեշտ է տրնկիների ապահով և ժամանակին տեղափոխումն ապահովելու տեսակետից:

ՀՈՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Տնկարանը հիմնադրում են մի քանի տարիների համար, ուստի տնկարանի հողամասն անհրաժեշտ է ճիշտ օգտագործել:

Տնկարանի հողամասում ավանի համար պետք է առանձնացնել մի հողակտոր՝ գրասենյակ, պահեստներ, գոմեր, բնակարանային-կենցաղային շենքեր կառուցելու նպատակով:

Եթե տնկարանը հիմնադրվում է արդեն գոյութիւն ունեցող անտեսութեան կից (կոլխոզ), ապա նրա տարածութեան վրա պետք է պահեստներ կառուցել՝ գույքը, սերմերը և այլ նյութերը պահելու, ինչպես և պետք է ունենալ տնկիները հակալորելու համար սրահներ և ծածկեր:

Տնկարանի հողամասը պետք է պլանիքով կապի ենթարկել՝ համաձայն սահմանված ցանքաչրջանագութեան, կազմակերպել ուղղող ցանց, ճանապարհներ

անցկացնել, թթենու հատուկ հողամաս առանձնացնել՝ մայրացու տնկելու համար, ցանքաչրջանառության դաշտերի բաշխում կատարել, իսկ դաշտերի հողամասերը բաժանել հողակտորների: Դաշտերը պետք է լինեն հավասար չափի և, ըստ հնարավորության, ուղղանկյուն կամ քառակուսի:

Ցանքաչրջանառության դաշտերի և հողակտորների անկյուններում պետք է սյուներ տնկել ու դրանց վրա տախտակի փոքրիկ կտորներ ամրացնել, որոնց վրա հոռոմեական թվանշաններով նշանակել ցանքաչրջանառության №-ը, իսկ արբարականով՝ հողակտորի №-ը և այդպես գրանցել տնկարանային գրքում: Որպեսզի սյուներն ավելի երկար դիմանան, նրանց ծայրերը պետք է անխացնել, կեղևը մաշկել և ներկել յուղաներկով կամ 10—15 օր պահել 10 տոկոսային պղնձացջասպի լուծույթի մեջ:

ՄԵԼԻՈՒՐԱՑԻԱ

Տնկարանի հողամասը պետք է լավ հարթել, քարերը հավաքել, կոճղերը և թփուտներն արմատահանել, ոտոզման ցանց անցկացնել, իսկ եթե հողամասն ավելորդ խոնավություն ունի, անհրաժեշտ է դրենաժի առուներ անցկացնել՝ ավելորդ ջրերը հեռացնելու համար:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Տնկարանը մեծ լինելու դեպքում հողամասի կենտրոնում պետք է 6—8 մետր լայնությամբ խաչաձև ճանապարհ անցկացնել, իսկ հողամասի շուրջը՝ 4—5 մետր լայնությամբ. բացի այդ, միջդաշտային ճանապարհներ՝ անցկացնել 2,5—3 մետր լայնությամբ: Կառուցվող ճանապարհներն անհրաժեշտ են հողը մշակող մեքենաների շրջադարձի, տնկանյութերի և այլ փոխադրումների համար:

ԿՆՆԴԱՆԻ ՑԱՆԿԱՊԱՏ

Տնկարանն անասուններից և փչացումից պաշտպանելու համար, անհրաժեշտ է նրա ամբողջ հողամասը շրջապատել կենդանի ցանկապատով:

Ցանկապատի տնկման համար կարելի է օգտագործել Գլենդիչիա կամ Մակլյուրա բույսերը:

Ցանկապատի բույսերը պետք է տնկել 2 շարք՝ շախմատաձև, շարքը-շարքից և բույսը-բույսից 50 սմ. հեռավորությամբ:

Բույսերի տնկման համար ցանկապատի երկարությամբ 40—50 սմ. խորությամբ և լայնությամբ պետք է խրամատ փորել, ապա նրա խորության $\frac{2}{3}$ չափով լցնել հողով և մի քանի օրից հետո, լարի օգնությամբ, տնկել բույսերը, այնուհետև ջրել և խուզել նրանց ճյուղերի երկարությունից $\frac{1}{3}$ -ի չափով:

Ամբողջ վեգետացիայի չընթացքում, ըստ պահանջի, պետք է ջրել և հողը փխրեցնել 3—5 անգամ: Ցանկապատը խիտ ցտանալու համար բույսերն իրենց մեկ տարվա աճեցողության կեսի չափով պետք է խուզել:

ՑՆԿԱՐԱՆԻ ՄԱՍԵՐԸ

Սովորաբար տնկարանը բաղկացած է լինում 2 մասից, առաջին մասը՝ ցանքի բաժանմունք, երկրորդը՝ չկոլա:

Ցանքի բաժանմունքում աճեցվում են բուսակներ, իսկ չկոլայում կատարվում է աչքապատվաստներ ձևավորում ու աճեցում:

ՑԱՆՔԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Հողի ֆիզիկական հատկությունները բարելավելու, բերրիությունը վերակազմելու, մնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարելու համար, անպայման 3—4 դաշտյան ցանքաչբջանառու-

Թյուն է մտցվում՝ անկարանում եղած հողի տարածութեանը համապատասխան:

Յանքաչրջանառութեան մեջ մտցնել միամյա խոտաբույսեր, լոբազգիներ, բանջարանոցային բույսեր և շարքահերկ կուլտուրաներ:

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԱՆՔԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ

1. Յանքի դաշտ:

2. Միամյա խոտաբույսեր կամ հատիկավոր լոբազգիներ:

3. Սև ցեղ կամ վաղ հավաքվող շարահերկ բույսեր և այսպես հերթականութեամբ շարունակվում է կուլտուրաների միմյանց հաջորդումը:

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Մինչ վարը սկսելն անհրաժեշտ է հողամասը պլանիբովկայի ենթարկել՝ հարմարություն ստեղծելով ջրելու համար:

Յանքի հողամասը պետք է վարել աշնանը՝ 30—35 սմ. խորութեամբ:

Յանքից 10—15 օր առաջ պետք է մտցնել հանքային պարարտանյութ և կատարել կրկնավար՝ 15—18 սմ. խորութեամբ, փխրացնել հողի կոշտերը և մաքրել քարերը, փոցխել 2—3 անգամ ու մաքրել մոլախոտերի մնացորդները:

Հողը լավ հարթելուց հետո, մարկյորով զծեր քաջել՝ 70—75 սմ. հկռայորութեամբ, յապա մարդոցով թմբեր պատրաստել:

Թմբերի երկարությունը պետք է լինի 10—20 մետր, լայնությունը՝ 30—35 սմ., բարձրությունը՝ 30 սմ., երկու թմբերի միջև ոռոգման առկի լայնությունը՝ 40 սմ.:

Թմբերի ուղիղ լինելը և ջրի հավասարապես հո-

սելն սուղելու նպատակով, պետք է կատարել փորձ-
նական ոտոզում: Եթե թմբերի միջև 4 ոտոզ ջուրը
միահավասար բարձրութեան վրա չի հոսում, պետք է
թմբերն ուղղել: 1

Թեթև, ավազախտոն չկեղևակալվող հողերում,
ցանքը կարելի է կատարել մարզերով, ընդունելով
մարզերի երկարութիւնը 2—3 մետր, լայնութիւնը
մեկ մետր. լավ հարթել ձեռքի փոցիսով, ըստ մարզե-
րի լայնութեան ակոսներ քաշել և ապա ցանել:

ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏԲԱՍՏՈՒՄԸ

Մեկ հեկտար տարածութեան վրա պետք է ցանել
10 կգ. սերմ 80 տոկոսից՝ ոչ պակաս ծլունակութեամբ,
իսկ եթե ծլունակութիւնը 80 տոկոսից ցածր է, ցան-
քի նորման պետք է ավելացնել ըստ սերմի ծլունա-
կութեան:

Ցանքից առաջ սերմը պետք է թրջել: Դրա համար
անհրաժեշտ է սերմը լցնել պարկի մեջ, 2 օր պահել
հոսող ջրում կամ ջրով լցված փայտյա տակառի մեջ:
Ցակառի մեջ թրջելու դեպքում ջուրը պետք է փոխել
օրական 2—3 անգամ:

Յուրաքանչյուր անգամ պետք է թրջել այնպիսի
քանակութեամբ սերմ, որքան հնարավոր է ցանել մեկ
օրում:

Թրջելուց հետո պետք է սերմին խտնել մաքուր
դետալիպ 1:2 հարաբերութեամբ (մեկ մասը սերմ 2
մասը դետալիպ) և ապա ցանել:

Յ Ա Ն Ք

Թթենու ցանքը պետք է կատարել այն ժամանակ,
երբ տվյալ շրջանում թթենիներն սկսում են բողբոջել
և վերջացնել ոչ ուշ, քան մայիսի 1-ը: Ամբողջ ցանքը
պետք է կատարել 2—3 օրվա ընթացքում:

Ցանքը թմբային ձևով կատարելու դեպքում,

սերմը պետք է ցանել թմբի երկու կողմերում՝ 10 սմ.
լայնությամբ պատրաստված ափսներում՝ 0,5—1,5
սմ. խորությամբ:

Ցանքը պետք է կատարել ձեռքով, սերմը ափսում
ցանել միահավասար և ծածկել հողի բարակ շերտով:

Մարզերում ցանք կատարելու դեպքում, մարզի
լայնությամբ, քաշել 10 սմ. լայնությամբ ափսներ,
իրարից 20—25 սմ. հեռախորության վրա:

Սերմը ցանել ափսներում և ծածկել 0,5—1,5 սմ.
հողի բարակ շերտով:

Նոսր ծլած, կամ բոյորովին չծլած տարածու-
թյունները պետք է կրկին՝ անգամ ցանել, որի համար
անհրաժեշտ է սերմը նախապատրաստել հեռեյալ ձե-
վով, սերմը երկու օր պահել հոսող ջրում, հետո հա-
նել, քամել, խառնել մաքուր գետավազի հետ 1:2
հարաբերությամբ, ապա 4—5 սմ. հաստության շեր-
տով լցնել փայտի արկղի մեջ և ծածկել 1—1,5 սմ.
մաքուր գետավազով:

Խառնուրդը 3—4 օր պահել 25—30 աստիճան ջեր-
մություն ունեցող շենքում և խոնավությունը պահ-
պանելու համար ջրել: Սերմը ուռչելուց և կեղևը ճա-
քելուց հետո ցանել:

ՅԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

Ցանքն ավարտելուց հետո անմիջապես պետք է
ջրել, մինչև ծիրերի երևալը՝ հողն անընդհատ պահել
խոնավ վիճակում և, նայած հողին, պետք է ջրել ա-
մեն օր կամ 2 օրը մեկ անգամ՝ երեկոյան հովին:

Ցանքը պետք է ջրել շատ զգույշ՝ ջուրը բաց թող-
նել դանդաղ հոսանքով:

Թմբային ցանքի դեպքում ջրել այնպես, որ հո-
սող ջուրը չբարձրանա թմբի վրա, այլ անցնի ցանքի
տեղից մի քիչ ցած՝ և ջուրը թողնել այնքան, որ թրմ-
բերը լավ խոնավանան:

Մարզերով ցանքը ջրել նույնպես բարակ և դան-

դադ հոսանքով. այնպէս, որ ամբողջ մարզը համա-
հալասար ջրովի:

Թթենու ծիւերն ամրանալուց հետո, ցանքի ոռո-
գումը կարելի է պակասեցնել՝ ջրելով 3—4 օրը մեկ
անգամ, բայց այն հաշվով, որ հողը միշտ խոնավ
լինի:

Յանքի հողը պետք է փխրուն լինի, մոլախոտերից
ազատ: Առաջին քաղհանը պետք է կատարել մոլախո-
տերը երևալուց հետո՝ չսպասելով Թթենու ծիւերի
դուրս գալուն:

Ամբողջ վեզետացիայի ընթացքում, ցանքի դաշտը
պետք է քաղհանել առնվազն 6—7 անգամ և փխրեցնել
ամեն մեկ ջրից հետո հողը քեչի դալուն պես կամ ջրե-
լուց 2—3 օր հետո:

Յանած տարածությունները քաղհանել ձեռքով՝
բույսերին չարորել կամ վնասել, իսկ միջշարքային
տարածությունները քաղհանել հողուրագով կամ կու-
տիվատորով:

Խիտ բուսած ցանքերում կարելի է կատարել նոս-
րացում՝ ի հաշիվ նվազ բույսերի, թողնելով բույսը
բույսից 2 սմ. հեռավորության վրա: Նոսրացում կա-
տարել այն ժամանակ, երբ բույսն ունի 5 տերև:

ՅԱՆՔԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

Հաճախակի Թթենու ցանքը լավ մշակության դեպ-
քում էլ տալիս է բույսերի թուլ ճակատ որակի
բուսակներ. թուլ ճաման պատճառներից մեկը կայա-
նում է նրանում, որ ցանքի հողը յուր մեջ չի պարու-
նակում պահանջվող քանակի սննդատու նյութեր: Այդ
պակասը լրացնելու համար Թթենու ցանքը պետք է
պարարտացնել, պարարտացումը պետք է կատարել
կամ հանքային պարարտանյութերով կամ դոմաղբով:

Մեկ հեկտար տարածությունը պարարտացնելու
համար պետք է տալ հետևյալ քանակությամբ հանքա-
յին պարարտանյութ:

1. Ազոտային (ամոնիում սուլֆատ 20 տոկոսանոց) 900 կգ.
2. Ֆոսֆորային (սուպերֆոսֆատ 18 տոկոսանոց) 500 կգ.
3. Կալիումի աղ (60 տոկոսանոց) 100 կգ.

Հանքային պարարտանյութը մտցնել երկու նվազով: Առաջին անգամ ազոտային պարարտանյութի 50 տոկոսը և ամբողջ ֆոսֆորային ու կալիումի աղերը՝ ցանքից 10—15 օր առաջ—կրկնավարի ժամանակ: Երկրորդ անգամ՝ ազոտային պարարտանյութի մնացած 50 տոկոսն այն ժամանակ, երբ թթենու նորածիլ բույսերն ունենան 3—4 տերև կամ ցանքից մեկ ամիս հետո. պարարտանյութը 2-րդ նվազում պետք է շաղ տալ այնպես, որ բույսերի վրա չթափվի:

Հանքային պարարտանյութի յուրաքանչյուր տեսակը կշռելուց առաջ պետք է լավ մանրացնել, մաղել 2—3 միլիմետրանոց մաղով, կշռել, ապա լավ խառնել իրար հետ և այդ խառնուրդին ավելացնել հող (1 սրբարտանյութ 5 հողի հաշվով), որից հետո նորից լավ խառնել, ստացված խառնուրդը հավասարաչափ շաղ տալ և ապա կատարել կրկնավար:

Ցանքի համար նախատեսված տարածութունը գոմաղբով պարարտացնելու դեպքում, գոմաղբը դաշտը տեղափոխել աշնանը և թափել կույտերով մեկ հեկտարին 40 տոննայի հաշվով, գոմաղբի կույտերը հավասար շաղ տալ և ոչ ուշ, քան մեկ կամ երկու օրվա ընթացքում ցրտահերկ կատարել այնպես, որ գոմաղբն ընկնի հողի տակ:

ԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ, ՌԵԱԼԻԶԱՑԻԱՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆԵԼԸ

Բուսակները կարելի է հանել աշնանը, երբ տերևները ամբողջովին դեղնում են (սառնամանիքները սկսելուց առաջ), կամ դարնանը՝ մինչև հյութաչարժության սկսվելը:

Բուսակները հանել այնպես, որ նրանց գլխավոր արմատները ունենան առնվազն 20—25 սմ. երկարութիւն:

Բուսակները հանել բահերով. դրա համար շարքի երկարութեամբ 20 սմ. խորութեամբ առու փորել, այնուհետև բույսերը հրել գցել առվի մեջ: Այդ գործողութիւնը կատարել զգուշութեամբ, որպէսզի արմատները չվնասուին և նրանց կեղևները չքերվեն:

Եթէ մինչ հանելը բույսերի տերևները թափված չեն, ապա դրանք պիտի պոկուտել ձեռքի շարժումով զգուշութեամբ վերևից ներքև:

Հանելուց հետո բուսակները պետք է տեսակավորել և ըստ առանձին տեսակների հաշիւել: Չտեսակավորված բուսակների տնկումն անթույլատրելի է, քանի որ անհավասար զարգացած բուսակները տնկարանում խայտարեկտութիւն են ստեղծում և իջեցնում ստանդարտ տնկանյութի քանակը՝ խախտելով ՄՍՌՄ Հողօգտագործման կողմից հաստատված ստանդարտը:

Բուսակները բաժանվում են երեք տեսակի

	Դաշտային շրջաններ			Նախալեռն. և լեռնային շրջաններ		
	1 տեսակ	2 տեսակ	3 տեսակ	1 տեսակ	2 տեսակ	3 տեսակ
ա) Արմատավորիկի հաստութեան (տրամագիծը) միմետրներով.	7	5	3	5	4,5	3
բ) Գլխավոր արմատի երկարութիւնը սանտիմետրներով.	30	25	20	25	22	20
գ) Ցողունի երկարութիւնը սանտիմետրներով.	60	40	20	50	35	20

Չարգլիւած, ծումովիւած արմատներով և ցողուններով բուսակները խոտանվում են, իսկ ստանդարտին չհամապատասխանող (մանր) բուսակները պետք է նորից չարքերով տնկել՝ բույսը-բույսից 4—5 սմ. և չարքը չարքից 40—50 սմ. հեռավորութեամբ:

Աշնանը և դարնանը հանված բուսակներն անմիջապէս պետք է թաղել, այլապես նրանք կարող են հեշտութեամբ չորանալ:

Բուսակները թաղելու համար պետք է ընտրել հյուսիս ընկած թեքութուն ունեցող հողամասեր, որտեղ ջերմաստիճանի տատանումները պակաս են, անձրեւիաջրերը չեն լճանում, հողը փխրուն է, քամիներէից և անասուններից պաշտպանված:

Բուսակները պետք է թաղել նախօրոք փորված առուններում՝ 45 աստիճան թեքութեամբ: Եթե բուսակները հանվելու են աշնանը և ձմեռը պետք է թաղած մնան, այդ դեպքում առվի մեջ նրանց պետք է դասափորել բարակ շերտով, թեք դրութեամբ՝ հենելով հետեւի պատին: Արմատները պետք է ուղղել, որպեսզի հողն ավելի լավ կպչի արմատներին: Այնուհետև հարկավոր է հող լցնել այնքան, որ ծածկվի նրանց $\frac{2}{3}$ մասը և երևան միայն ցողունների ծայրերը: Հողն ամուրջ արորել ու ջրել, որպեսզի լավ նստի:

Ծածկելու համար հողը պետք է վերցնել առվի առաջին պատից և այդպիսով տեղ բացել 2-րդ չարքի համար. 2-րդ չարքը դասափորել նույն ձևով, այնուհետև 3-րդը, 4-րդը և այդպես շարունակ: Այդ ձևով բուսակները կարելի է պահել մինչև դարուն: Եթե նախատեսվում է բուսակները տնկել կամ ռեալիզացիայի ենթարկել աշնանը, ըստ տեսակների պետք է խուրճեր կապել 50—100-ական հատ ու խրճերով հողին պահ տալ: Այս դեպքում առունները պատրաստել ոչ խոր և ծածկել միայն արմատները:

Բուսակները տեղափոխելու դեպքում, պետք է խնամքով հակափորել, այն է՝ արմատները ծածկել մամուռով կամ թաց ծղոտով, ապա ամբողջ խուրճը փա-

Թաթել կտորով կամ ճլոպով և կապել: Մտախի տեղ
Ֆուրգոններով, ավտոմեքենաներով ուղարկելու դեպ-
քում, դրանց հատակին և կողքերին պետք է խոնավ
ծղոտ կամ խոտ փոել և, ըստ հնարավորի, խրճիկները
խիտ դարսել: Բարձելուց հետո բուսակները պետք է
ծածկել բրեզենտով կամ խոտով:

Բուսակները տեղափոխելու ժամանակ, եթե ճանա-
պարհին թառամում կամ արմատները դունափոխվում
են, պետք է ջրում պահել 1—2 օր, որից հետո թաղել
խոնավ հողում 3 օր, ապա միայն տնկել:

ՇԿՈԼԱ

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԵՐԹԱՓԵՈՒՄԸ ԹԹԵՆՈՒԷ ՇԿՈԼԱՅՈՒՄ

Թթենու տնկարանում բույսերը մնում են 3 տարի:
Այդ ժամանակամիջոցում տեղի է ունենում հողի միա-
կողմանի հյուստում: Նա վարակվում է վնասատուներով,
հիվանդություններով, տարածվում են դանազան մոլա-
խոտեր: Այս բացասական երևույթները վերացնելու
համար անհրաժեշտ է տնկարանում ցանքաչրջանառու-
թյունն կիրառել: Առանց ցանքաչրջանառության չի կա-
րելի առողջ և լավ զարգացած տնկանյութ ստանալ:

Ցանքաչրջանառության ժամանակ պետք է ընտրել
այնպիսի կուլտուրաներ, որոնք նպաստում են հողի
ստրուկտուրայի վերականգնմանը, հարստացնում են
նրան օրգանական նյութերով, ոչնչացնում մոլախոտե-
րը և այլն: Շատ լավ են բազմամյա և միամյա լոբազ-
դի խոտերը, շարքահերկ բանջարանոցային բույսերը,
մանավանդ հատիկավոր լոբազդիները:

Սորհուրդ է տրվում թթենու տնկարանների համար
կիրառել 7 դաշտյա ցանքաչրջանառություն. հետևյալ
կարգով.

1-ին դաշտ.— աշնանը կամ դարնանը տնկվում է
թթենու բուսակներ, այդ նույն տարին, օգոստոսին
կատարվում է աչքապատկաստ:

2-րդ դաշտ—միամյա պատվաստներ.

3-րդ դաշտ—երկամյա տնկիներ: Աշնանը տնկիները հա-
նում.

4-րդ դաշտ—բազմամյա խոտեր.

5-րդ դաշտ—բազմամյա խոտեր.

6-րդ դաշտ—բազմամյա խոտեր և աշնանն այդ հողի
հերկ.

7-րդ դաշտ—միամյա շարքահերկ բույսեր (չուտ հա-
վաքվող), աշնանը կամ դարնանը թթենու բուսակները
տնկում:

ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԹԹԵՆՈՒ ՇԿՈՒԱՅԻ ՀԱՄԱՐ

Շկողայի տակ դրվող հողամասը պետք է պարար-
տացնել գոմաղբով, մեկ հեկտարին 40—50 տոննայի
չափով: Գոմաղբի բացակայության դեպքում պարար-
տացնել հանքային պարարտանյութերով՝ տալով մեկ
հեկտարին նույն քանակությամբ, ինչ որ տրվում է
ցանքի դեպքում (տես ցանքի պարարտացումը):

Շկողայում աշնան տնկում կատարելու դեպքում,
հողը վարել ամառյա վերջերին՝ 30—35 ամ. խորու-
թյամբ: Աշնանը կրկնավարից առաջ մտցնել գոմաղբ
կամ հանքային պարարտանյութեր և անմիջապես կա-
տարել կրկնավար՝ 20—25 ամ. խորությամբ, վարած
հողը փոցխել 2՝ անգամ, լայլ հարթել և մաքրել քարե-
րից ու մոլախոտերի մնացորդներից, իսկ դարնանը
տնկելու դեպքում, գոմաղբը մտցնել առաջին վարի
ժամանակ, հանքային պարարտանյութերը՝ դարնան
կրկնավարի ընթացքում:

ՇԿՈՒԱՅԻ ՏՆԿՈՒՄ

Թմբեր կամ մարգեր պատրաստելիս անպայման

պէտք է հաշվի առնել հողի դիրքը և ջրելու հարմարու-
թյունը: Շարքերի ուղղությունը պաշտպանելու հա-
մար, նախքան տնկելը հարկավոր է լարեր ձգել կամ
մարկյորով դժեր քաշել: Ավելի լավ է տնկվող հո-
ղակտորի երկարությամբ լարերի վրա կապել կարմիր
կտորից նշաններ կամ թիթեղյա պիտակներ՝ 30 սմ.
հեռավորության վրա և բուսակը տնկել լարի ուղղու-
թյամբ, այդ պիտակների տեղը:

Բուսակները տնկել ուղիղ շարքերով՝ մեկ հեկտա-
րին 41700 հատ, շարքը շարքից 80 սմ., բույսը-բույ-
սից 30 սմ. հեռավորությամբ:

Տնկելու համար ընտրել միայն միատեսակ, ստան-
դարա բուսակներ: Բուսակները տարբեր մեծության
լինելու դեպքում, այդպիսիք պետք է տնկել առանձին
հողակտորներում:

Նախքան բուսակները տնկելը, հարկավոր է ար-
մատները մաքրել վիրավոր մասերից և գլխավոր ար-
մատի ծայրը կտրել՝ թողնելով 18—20 սմ. երկարու-
թյան: Բուսակները տնկել աշնանը տերեւաթափից ան-
միջապես հետո, մինչև ցրտերը սկսվելը կամ վաղ դար-
նանը՝ մինչև հյութաշարժումը:

Տնկել կարելի է ցցի միջոցով, կամ բահով: Ցցի
միջոցով տնկելու ժամանակ աշխատում են երկու հո-
գով, նրանցից մեկը լարին կապած նշանի կամ պիտա-
կի դիմաց ցցով հողում փոս է բացում 22 սմ. խորու-
թյամբ, իսկ երկրորդը փոսում դնում է տնկին ճիշտ
պիտակի դիմաց, որից հետո փոսի կողքից նորից
խրում են ցիցը նույն խորությամբ, ապա թեքում դե-
պի տնկին և սեղմում այնպես, որ հողը ամբանա
տնկիի արմատներին:

Տնկին փոսում դնել այնպես, որ արմատավիղը
հավասար լինի հողի մակերեսին և փոսում հող ցնե-
լիս դատարկութուն չմնա:

Բահով տնկելու ժամանակ մեկ բահի խորությամբ
ձգած լարի պիտակի կամ նշանի դիմաց փոսեր փորել
և հող ցնել աջ կամ ձախ կողմը:

Տնկելու ժամանակ ձախ ձեռքով բռնում են տնկին
փոսի մեջ այնպես, որ արմատավիզը հավասար լինի
հողի մակերեսին, աջ ձեռքով փոսի մեջ լցնում կողքի
հողը, ծածկում են ամբողջ արմատային սխտեմը և
հողը ամբացնում ոտքերի ծայրերով:

Տնկման ժամանակ բուսակները պահել կողովում
կամ դուշի մեջ և արմատները ծածկել խոնավ շորով.
օրվա տեկած տարածութունը ջրել նույն օրը (ջուրը
ուշացնելու դեպքում կպչողականության տոկոսը ցածր
է լինում):

ՏՆՎԱՐԱՆԻ 1-ԻՆ ԴԱՇՏԻ ԽՆԱՄՔԸ ՄԻՆՉԵՎ ԱԶԲԱՊԱՏՎԱՍՏԸ

Այնանը կամ դարնանը տնկված բուսակների ցո-
ղունի վերևի մասը պետք է կտրել, վաղ դարնանը
պատվաստելու դեպքում՝ 10—15 սմ. բարձրության
վրա, իսկ չպատվաստելու դեպքում 5 սմ. բարձրու-
թյամբ պետք է կտրել ցողունի ծայրը:

Պատվաստման ոչ ենթակա (այն է տեսակավոր
թթենիները և ոչ փլատակավոր ու խոշոր տերև ունե-
ցող) տնկիների աչքերից դուրս եկած 10—15 սմ. եր-
կարությամբ ճյուղերը այդու սուր դանակով պետք է
հիմքից կտրել՝ թողնելով նրանցից միմիայն ամենից
ուժեղ դարգացածը:

Ամառվա ընթացքում ձերատում կատարել (պին-
ցիրով կա), այսինքն՝ բնի վրա դուրս եկած ճյուղերի
ծայրերը կտրել, թողնելով 4—5 տերև, իսկ պատ-
վաստման ենթակա տնկիները չմաքրել և չձերատել:

Տնկարանն ամբողջ վեգետացիայի ընթացքում,
նայած հողային և օդերեկվութարանական պայմաննե-
րին, ջրել 8—10 անգամ, վերջին ջուրը տալ սեպտեմ-
բերի 15-ից ոչ ուշ:

Քաղհանը, փխրեցումը և միջշաքային տարածու-
թյունների կուլտիվացիան կատարել ըստ պահանջի,
բայց ոչ պակաս, քան 4—5 անգամ:

ԱՉԻՍՊԱՏՎԱՍՏ

Տնկաբանի 1-ին դաշտում սովորաբար ամառվա վերջին պատվաստման ենթակա տնկիները պետք է աչքապատվաստել: Հայաստանի դաշտային շրջաններում աչքապատվաստի լավագույն ժամկետը համարվում է օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 15-ը, իսկ նախալեռնային շրջաններում՝ օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը:

Աչքապատվաստից լավագույն արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

ա) Տնկիները պետք է լավ զարգացած լինեն և արմատավզի հաստություն ունենան ոչ պակաս, քան 8—10 սմ.:

բ) Տնկիների կեղևը պետք է հեշտությամբ անջատվի:

գ) Աչքապատվաստի համար վերցրվող կտրոնների աչքերը պետք է լավ զարգացած լինեն:

Աչքապատվաստից 3—4 օր անաջ հողամասը պետք է ջրել, այնուհետև հողը փխրեցնել՝ խոնավության կուտակման և հյութաշարժության բարելավման համար: Աչքապատվաստից 1—2 օր անաջ տնկիների բնի այն մասը, որտեղ պետք է կատարել աչքապատվաստը, մաքրել կողային ճյուղերից 10—15 սմ. բարձրության վրա՝ արմատավզից հաշված: Աչքապատվաստից անմիջապես անաջ արմատավզիկի հողը հեռացնել և մաքրել շորով:

Աչքապատվաստի համար կտրոններ մթերելու մասին անհրաժեշտ է վաղօրոք մտածել: Եթե սեփական մայրացու թթաստան կամ առանձին տեսակավոր թթենու ծառեր չկան, անհրաժեշտ է, աչքապատվաստն ապահովելու չափով՝ ստանդարտ սորտերի ծառերի ապրոքացիա կատարել:

Աչքապատվաստի համար օգտագործել միամյա ջվերի աչքերը: Կտրոնները պետք է լինեն միանգամայն հասունացած, առողջ, լավ զարգացած աչքերով:

կարոնաչվերը կտրելուց անմիջապես հետո, տերևները հեռացնել և միայն թողնել 1 սմ. ոչ ավելի տերևվա-
կոթուներ: Վերին և ներքին թույլ զարգացած աչ-
քերը պետք է կտրել, հեռացնել:

Կտրոններից 50-ական հատերից բաղկացած խրճիկ-
ներ կապել և վրայից տեսակը յուրյ տվող պիտակ կա-
խել:

Կտրոնները պահել հով տեղ, խոնավ ավազի, մա-
մուռի կամ խոնավ շորի մեջ: Ինչքան կտրոնները թաքմ
լինեն, այնքան լավ է, ուստի կտրոնները պետք է մթն-
րել պատվաստի նախօրյակին:

Կտրոնները հեռու տեղ ուղարկելու դեպքում փա-
թաթել խոնավ մամուռի կամ մեշոկի կտորի մեջ և
այն դարսել մանր անցքեր ունեցող արկղների մեջ:

Կտրոնները կարելի է պահել 5—6 օր:

Մինչև աչքապատվաստի սեզոնի սկսելը, պետք է
նախապատրաստել անհրաժեշտ ինվենտար և նյութեր.
այն է՝ աչքապատվաստի և այլու դանակներ, այլու
մկրասներ, կաշեղուտիներ, սրոցներ՝ (դանակներ
սրելու համար), արկղներ, փոքրիկ դույլեր՝ (կըտ-
րոններ պահելու համար), կտրոնները ծածկելու մե-
շոկներ, պիտակներ, ռաֆիա կամ ճիլոպ՝ պատվաստ-
ները փաթաթելու համար:

Աչքապատվաստը կատարվում է հետևյալ ձևով.

Արմատավզիկից մի քիչ վերև—մինչև 5 սմ. բարձ-
րության բուսակի կեղևի վրա T ձևի կտրվածք ա-
նել, դանակի ոտիկով կամ դանակի բուխ մասով կե-
ղևը զգուշությամբ հետ տանել երկու կողմերի վրա:

Կտրոնի միջին մասից կտրել լավ զարգացած աչ-
քեր՝ վահանիկի հետ միասին: Աչքը կտրել բնափայտի
չառ բարակ շերտով կամ առանց բնափայտի, (պատ-
վաստն առանց բնափայտի ավելի հաջող է կալում):

Կտրվածքը կատարում են աչքից 1 սմ. ջածք, դա-
նակն անց են կացնում աչքի տակով և կանգ առնում
աչքից 1 սմ. բարձր: Այսպիսով, ամբողջ վահանիկը
կունենա 2—2,5 սմ. երկարություն: Առանց բնափայ-

տի, աչքը նույնպես պետք է հանել դանակով, իսկ այ՛նուհետև երկու մատով բռնելով աչքի տերևակոթոնից հանել շվեց, բայց այնպես, որ աչքի ներքին մասը մնա վահանիկի վրա:

Այնուհետև աչքն արագորեն մտցնել Կ ձևի կտրը՝ վածքի մեջ և լավ նստեցնել:

Վահանիկի այն մասը, որ դուրս է մնում, զգուշու՛թյամբ կտրել՝ բուսակի վրա հորիզոնական կտրվածք կատարված տեղում: Աչքը դնելուց հետո պատվաստն ամուր փաթաթել ճիլոպով կամ ուֆիայով: Ճիլոպը դնել բուսակի վրա աչքապատվաստից քիչ վերև, այնպես, որ կարճ ծայրը մնա կախ ընկած, իսկ երկար ծայրով սկսել աչքապատվաստն ամուր փաթաթել՝ առանց բաց տեղ թողնելու: Փաթաթանյութն անց կացնել աչքի տակով, նրան չծածկելու համար և այնուհետև շարունակել մինչ ներքև, որտեղ և կապ անել:

Պատվաստի ժամանակ անհրաժեշտ է մաքրություն պահպանել, աչքին մատերով ձեռք չտալ, հետևել կեղևի և դանակի մաքրությանը, քանի որ այդ ամենը նպաստում են աչքապատվաստի հաջող կալմանը:

Աչքապատվաստ կարելի է անել Հյուսիսային կամ Հյուսիսարևմտյան կողմից: Բացի դրանից, անհրաժեշտ է հերթել քամիների ուղղությանը և աչքը տեղավորել քամու հոսանքի հակառակ կողմից, քանի որ այս դեպքում պատվաստի մատաղ շվերն ամուր են մնում և հեշտությամբ չեն կոտրվում:

10—15 օր հետո կատարած աչքապատվաստները պետք է ստուգել: Եթե աչքի վրա մնացած տերևակոթոնին մատի ծայրով դիպչելիս հեշտությամբ ընկնում է կամ մինչև այդ ինքն իրեն արդեն ընկել է և աչքն էլ թարմ է ու կանաչ, ապա դա կնշանակի, որ աչքը կպել է, իսկ եթե տերևակոթոնը չի ընկնում ու աչքն էլ մուգ է, իսկ կեղևը թառամած, նշանակում է պատվաստը չի կպել՝ անհրաժեշտ է կրկին անգամ աչքապատվաստել: Երկրորդ անգամ աչքապատվաստը պետք է կատարել կողքից կամ հակառակ երեսից՝ առաջին պատվաստի տեղից ցածր:

Աչքապատվաստի, ստուգման ժամանակ պետք է ստուգել նաև կապերը. եթե վերջիններս սկսում են սեղմվել կեղևի մեջ, նրանց թուլացնել ու նորից կապել: Կապերը ժամանակին թուլացնելը մեծ նշանակու- թյուն ունի, որովհետև սեղմվածք առաջացած տեղում բույսերը հեշտությամբ կտարվում են:

Յածրադիր շրջաններում աչքապատվաստից հետո հողամասը շատ զգուշությամբ պետք է ջրել: Զրեւու ժամանակ հարկավոր է հետևել, որ աչքապատվաստի տեղը չխոնավանա: Հողը քեչի գալուց անմիջապես հետո կատարել կուլտիվացիա:

Մինչև վեգետացիայի վերջը, չորային շրջաններում, պետք է ջրել, կուլտիվացիա և փխրեցում կատարել:

Յուրա ձմեռ ունեցող վայրերում պետք է 15 սմ. բարձրությամբ բուկլից կատարել՝ աչքերը ցրտահարությունից պաշտպանելու համար:

Յածրադիր շրջաններում բուկլիցը անել նույն բերի սկզբներին, իսկ լեռնային և նախալեռնային շրջաններում՝ հոկտեմբերի 20-ից:

ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄԻՐԸ 2-ՐԻ ՏԱՐՈՒՄ

Վաղ գարնան, հենց որ հողն սկսում է չորանալ, աչքապատվաստների բուկ տված հողը պետք է հետ տալ: Այս աշխատանքը ձգձգել չի կարելի, քանի որ խոնավ հողի մեջ աչքերը հեշտությամբ են մզլում (բորբոսնում): Աչքերը չմնասելու համար, այս աշխատանքը պիտի կատարել մեծ զգուշությամբ: Այնուհետև պետք է արձակել կապերը և հեռացնել:

Կապերը հեռացնելուց հետո, պետք է էտ կատարել՝ թողնելով բութակը: Աչքապատվաստից 10—15 սմ. վրա վայրահները էտել, իսկ բութակի վրայից հեռացնել բոլոր աչքերը և այն շեփերը, որոնք առաջանում են աչքապատվաստի տեղից ցած. էտի ուշացնելն ազդում է պտուղատառի զարգացման, աչքի արտադ աճման վրա:

Բոլոր այն շիվերը, որոնք կառաջանան բուժակի վրա և պատվաստի ներքևի մասից, պետք է սխտեմատիկաբար կտրել հեռացնել:

Աչքապատվաստից դարգացած շիվը պետք է կապել բուժակին, երբ նա կունենա 15—20 սմ. բարձրութուն: Պատվաստաշիվը կապել խոնավ ճիլոպով: Այս աշխատանքը նույնպես չպետք է ուշացնել, հակառակ դեպքում պատվաստաշիվը կծուլի:

Գարնանը բուժակի էտից հետո վերստուգել կպած պատվաստները:

Աշնանը չպատվաստված վայրակները կամ չկպած պատվաստները դարնանը վայրակների լրիվ հյութաշարժության ժամանակ նորից աչքապատվաստել կամ կտրոնապատվաստել:

Գարնան աչքապատվաստի կտրոնները մթերել ուշ աշնանը կամ վաղ դարնանը՝ մինչև բողբոջների ուռչելը. կտրոններից 25—30-ական հատ խրճիկներ կապել, վրան պիտակներ փակցնել և պահել հով նկուղում՝ խոնավ ավազի մեջ:

Գարնան աչքապատվաստը կատարել լրիվ հյութաշարժության ժամանակ, այնպես ինչպես և ամռանը:

Աչքապատվաստից հետո պետք է էս կատարել թողնելով բուժակը: Հետագա խնամքը նույնն է, ինչ որ աշնան աչքապատվաստի ժամանակ:

Լավազույն հետևանք է տալիս վայրակների հյութաշարժության ժամանակ կատարած կտրոնապատվաստը կամ կողային ճեղքվածքի պատվաստը:

Ամառվա երկրորդ կեսին, մոտավորապես հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը, եթե մատաղ շիվը բավականաչափ փայտանում է, բուժակը պետք է հեռացնել: Լեռնային և նախալեռնային շրջաններում՝ այս աշխատանքը ավարտել մինչև օգոստոսի 1-ը:

Բուժակը հեռացնել այդու սուր դանակով՝ պատվաստի հիմքից մի քիչ թեք անկյան տակ, այնպես, որ կտրվածքի վերին ծայրը պատվաստի հիմքին մոտ լինի:

Պատվաստաչվին չդիպչելու համար, կտրվածքը կատարել զգուշութեամբ: Կտրվածքի մակերեսը պետք է հարթ լինի: Այդ աշխատանքը ուշացնել չի կարելի, քանի որ մինչև ցրտերն ընկնելը պետք է խցանային հյուսվածքով ծածկվի:

Ամառվա ընթացքում, ըստ պահանջի, հողամասը պետք է ջրել, փխրեցնել և քաղհանել: Միջարքային տարածութիւններին մշակումը կատարել ձիու կուլտիվատորով, իսկ չարքերում հողուրաղներով: Յածրադիր շրջաններում տնկարանների ջրելը պետք է ավարտել սեպտեմբերի երկրորդ կեսին, իսկ լեռնային և նախալեռնային շրջաններում օգոստոսի վերջին:

Երբեմն պատահում է, որ մի աչքից զարգանում է 2 չիվ, այս դեպքում պետք է թողնել միայն ամենաուժեղը: Ամռան ընթացքում, ինչպես պատվաստած, նույնպես ոչ պատվաստած միամյակ տնկիների կողերի, ավելորդ ճյուղերի ծայրերը կտրել, թողնելով 4—5 տերև, որը նպաստում է ցողունի հաստանալուն: Գազաթի վրա թողնել 3—4 ճյուղ՝ հետագայում սաղարթ կազմելու համար:

Լավ խնամքի և նպաստավոր հողային կլիմայական պայմաններում պատվաստների մեծ մասը սկսում են ճյուղավորվել և տալիս են միանգամայն զարգացած, հասունացած չիվեր, այդ դեպքում ամառվա կեսին, երբ տնկիները կունենան 110 սմ. բարձրութիւն, կարելի է ձեռնարկել սաղարթի ձևավորմանը: Դրա համար արմատավրից հաշված 110 սմ. բարձրութեան վրա կտրել բունը, դազաթից թողնելով 3 այնպիսի ճյուղեր կամ աչքեր, որոնք ամենաուժեղներն են և տարբեր ուղղութիւն ունեն, որից և կազմել ծառի սաղարթը:

ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄՔԸ 3-ՐԿ ՏԱՐՈՒՄ

Այն միամյակները, որոնք չեն ձևավորվել 2-րդ տարում, այդպիսիները վաղ գարնանը անպայման

պետք է ձևալորել վերևում նշված ձևով: Ամառյա ընթացքում կողերից դուրս եկած բոլոր չիվերը, բացի սաղարթի հիմնական 3 ճյուղերից, պետք է կտրատել, թողնելով 4—5 տերև՝ միամյա բունը հաստանալու համար: Օգոստոս ամսվա սկզբից բնի վրայի բոլոր տերերը պետք է հիմքից հեռացնել՝ թողնելով միայն 3 հիմնական ճյուղերը:

Ամառյա ընթացքում, ըստ պահանջի, հողամասը պետք է ջրել ցածրադիր շրջաններում 8—10, խսկ լեռնային շրջաններում՝ 4—5 անգամ. կուլտիվացիայի քաղհան կատարել 3—5 անգամ:

ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՈՒՄԸ, ՌԵՍԱԼԻԶԱՑԻԱՆ ՌԵՆՍ. ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Տնկանյութը պետք է հանել աշնանը, երբ սկսվում է տերևների մատասյալան դեղնում կամ վաղ դարնանը՝ մինչև բողբոջների բացվելը:

Տնկանյութը հանել ձեռքի երկար բահերով կամ ձիու և տրակտորի հատուկ մեքենաներով: Հանելու ժամանակ պետք է ուշադրութուն դարձնել, որպեսզի տնկիները 25—30 սմ. կարճ չլինեն և արմատները չվնասվեն: Հաջող հանելու համար սովորաբար տրնկիները շարքերի առաջ 30—40 սմ. խորությամբ պետք է առու փորել, այնուհետև բանջորը կանգնելով տնկենու հետևը զգուշությամբ բահով կտրում է արմատները և հրում-դցում առվի մեջ: Հանելուց հետո տնկիները պետք է տեսակավորել, հաշվել և անմիջապես թաղել, որպեսզի արմատները չչորանան:

Թաղելու համար պետք է ընտրել սովերոտ տեղ, ցանկալի է ընտրել դեպի հյուսիս ընկած թեթև թեքությամբ տեղ, որպեսզի դարնանը բողբոջները վաղաժամ չբացվեն և ձմեռը ջերմաստիճանի սուր տատանումներ չլինեն, ինչպես նաև ջրի լճացում տեղի չտնենա:

Հողամասի շուրջը 50 սմ. խորությամբ ու լայնությամբ առու փորել՝ հարվող ձյան և անձրեխային

Ջրերը հեռացնելու համար (դա միաժամանակ ծառա-
յում է մկներից պաշտպանելուն) :

Տնկիներ թաղելու առուն փորել 50 սմ. խորու-
թյամբ, 60—70 սմ. լայնությամբ: Առուի հետևի
պատը 45 աստիճան թեք է արվում, որպեսզի տնկինե-
րը պատին հենելը հարմար լինի: Տնկիների առաջին
շարքը դարսելուց հետո, արմատների վրա՝ առվի հա-
կառակ կողմից, փխրուն, խոնավ հող պետք է լցնել,
և ամրացնել: Անհրաժեշտ է խստորեն հետևել, որ-
պեսզի արմատների և հողի մեջ դատարկ տարածու-
թյուններ չմնան: Ոչ մի դեպքում չի թույլատրվում
խոշոր կոշտեր ունեցող հող լցնել: Հողը կոխտակելուց
հետո պետք է ջրել, այնուհետև լցնել հողի մի նոր
չերտ այնքան քանակությամբ, որ ծածկի ամբողջ
տնկիի $\frac{1}{3}$ մասը:

Առաջին շարքը ծածկելուց հետո սկսում են 2-րդ
շարքը և այդպես շարունակում: Ոչ մի դեպքում տնկի-
ները չպետք է ծածկել ծղոտով, որպեսզի մկները՝ նրա
մեջ բուն չղենն:

Սորաները նշելու համար հողի մեջ պիտակ տնկել,
որի վրա յուղաներկով գրել տեսակը և սորտի անունը:
Տարբեր սորտեր թողնելու դեպքում, յուրաքանչյուր
սորտը մյուսից անջատել՝ ոչ պակաս 1 մետր հեռավո-
րությամբ: Յանկալի է յուրաքանչյուր սորտի համար
առանձին խրամատ ունենալ:

Սորաները խոնակելուց խուսափելու համար, բոլոր
տնկիները թաղելուց հետո, կազմել այդ հողամասի
հատակազիծը և նշանակել, թե որտեղ ինչ սորտ է թա-
ղած:

Տնկիներն ուրիշ տեղ ուղարկելու դեպքում, առան-
ձին սորտերով 20—25-ական հատից խրճիկներ կապել
և նշող պիտակ փակցնել: Տնկիների արմատները չորա-
նալուց պաշտպանելու համար, ուղարկելուց առաջ,
թաթախել կավի և դոմաղբի թանձր շաղախի մեջ:

Հեռու տեղ ուղարկելիս անհրաժեշտ է տնկիները
խնամքով հակափորել: Այդ նպատակի համար օգտա-

դործել ռազոժա, մեշոկներ, մամուռ, ծղոտ և հունի-
սին կտրած եղեգ: Հակի քաշը 50—60 կիլոգրամից
չպետք է դերազանցի: Տնկիներին հակերը կապել առնը-
վադն Յ տեղից:

Այլոտմեքենաներով կամ Ֆուրգոններով մոտիկ
տարածություն ուղարկելու դեպքում, հատուկ հակա-
վորում չի պահանջվում: Մեքենայի հատակին և կող-
քերին պետք է խոնավ ծղոտ կամ խոտ փռել, տնկինե-
րը կանգնեցնել մի քիչ թեք դրուժյամբ, հնարավորին
չափ խիտ: Արմատների արանքներում խոնավ ծղոտ
դնել, վերեից տնկիները ծածկել բրեզենտով կամ մե-
շոկի կտորով: Անփուլթ տեղափոխումը հաճախ տնկի-
ների չորանալու և տնկելու ժամանակ անհաջողու-
թյունների պատճառ է դառնում:

Հեռու տեղից տնկանյութ ստանալիս, հակերը ան-
միջապես բացել, դնել և, ժամանակավորապես, մինչև
տնկումը, թաղել: Եթե ճանապարհին նրանք թառամել
են կամ արմատները գունափոխվել, թաղելուց առաջ
պետք է ջրի մեջ պահել 1—2 օր, ընդորում առաջին
օրը ջրի մեջ դնել նաև սաղարթը:

Տնկիները թեթևակի ստաժ լինելու դեպքում,
դնել, նորից փաթաթել և 1—2 օրով պահել ցուրտ
տեղ (այդ արվում է, որպեսզի տնկիները հետզհետե
տաքանան, հետ դան):

Առանձնապես պետք է շտապել վնասված տնկինե-
րը շուտ տնկել և հատուկ ուշադրություն դարձնել
դրանց ժամանակին ջրելու վրա:

ՏՆԿԱՆՑՈՒԹԻ ՍՏԱՆԴԱՐՏԸ

Տնկիներ բաց թողնելիս պետք է խստորեն հետե-
վել, որպեսզի տնկիները համապատասխանեն ՍՍՌՄ
Հողթողկոմատի կողմից մշակված ստանդարտին, քանի
որ տնկիի որակից է կախված տնկումների հաջողու-
թյունը և աճեցողությունը:

Թթենու տնկանյութը պատվաստված և ոչ պատ-

վաստված տնկիրները, համաձայն ստանդարտի, բաժանվում է երկու տեսակի՝ հետևյալ կարգով.

	1-ին տեսակ	2-րդ տեսակ	Մանրթություն
1. Բնի երկարությունը արմատավիկից մինչև սաղարթը սանտիմ.	100	100	Երկու դեպքումն էլ սաղարթը պետք է ունենա երեք հիմնական ճյուղեր:
2. Բնի հաստությունը սաղարթի մոտ սանտիմ.	10	7	
3. Արմատային սիստեմայի երկարությունը՝ սանտիմ.	25	20	

Պատվաստված և չպատվաստված թթենու տնկիրները տնկարաններից բաց է թողնվում 2—3 տարեկան հասակում:

ԹԹԱՍՏԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շերամապահուստի կերի բազա ստեղծելու համար, կազմակերպվում են թթենու պլանտացիաներ, այն հաշվով, որ կազմակերպվող թթաստանները լինեն կերակրման վայրերին մոտ, որպեսզի ստացած տերևը օգտագործվի որդի կերակրման ժամանակ՝ առանց դրժվարությունների, կամ թե թթաստանին կից նախատեսել շերամատան կառուցումը յուր բոլոր հարմարություններով:

Թթաստաններն ըստ իրենց տնկման սխեմի բաժանվում են 4 ձևի, 1-ին՝ թթենու բնավոր պլանտացիա, 2-րդ՝ խառը պլանտացիա, 3-րդ՝ թփածկ պլանտացիա և 4-րդ՝ կոմպակտ դձային հատատնկումներ:

ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Թթենու պլանտացիաների հողը հարկավոր է ընտրել աշնանից: Ընտրության ժամանակ պետք է նկատի

ունենալ նրա հետագա ընդարձակումը և մշակման մեքենայացումը: Թթենու պլանտացիաներին հատկացված հողը պետք է ջրով ապահովված լինի, քարերից և մոլախոտերից մաքուր: Լավագույն հողեր են համարվում՝ հումուսով հարուստ, խոր, փխրուն սարուկատուրային, միջակ կալային և ավազակալային հողերը, որտեղ ստորերկրյա ջրերը գտնվում են հողի մակերեսից 1,5—2 մետրից ոչ բարձր: Թթենու տնկարքների համար միանգամայն անպետք են համարվում ճահճացած, աղոտ և մաքուր ավազային հողերը:

Թթենու պլանտացիաներին հատկացված հողամասերում, հողը մաքրելուց և հարթելուց հետո, պետք է կատարել խոր վար 30—35 սմ. խորությամբ: Աշնան տնկումների համար հողամասը պետք է վարել մինչև սեպտեմբեր ամիսը, իսկ գարնան տնկումներին համար՝ նախորդ տարվա աշնանը:

Նախքան հատակազծումը, հողամասը պետք է փոցխել և հարթել՝ միաժամանակ մաքրել արմատներից ու մոլախոտերի մնացորդներից:

Այնուհետև հողամասը պետք է հատակազծել, նշել ծառերը տնկելու փոսերի տեղը՝ հաշվի առնելով թթենու պլանտացիաների տնկման սխեման:

Հատակազծումը պահանջում է մեծ ճշտություն, և դրա համար էլ մեծ տնկարքների հատակազծումը պետք է կատարել հողաչինարարների միջոցով:

Փոքր հողամասերի հատակազծումը կարելի է կատարել առանց հատուկ գործիքների—ձեռքի ուռլետայի և ցցերի միջոցով: Նման հատակազծման դեպքում աշխատանքը կատարվում է հետևյալ կերպ. թթենու պլանտացիաների համար հատկացված հողամասի չորս անկյուններում խիվում են բարձր ցցեր: Հողամասի ամեն մի կողմում, հիմնական չորս ցցերը ուղիղ գծով պետք է միացնել իրար հետ այնպես, որ ուղիղ անկյուն ստացվի: Այնուհետև պետք է չափել միջարքային տարածությունները և անցկացնել երկրորդական լարերը, որոնց վրա հանգույցներով կամ ներկով նշել

միջրույսային տարածությունները: Յուրաքանչյուր հանդույցի տեղում ցից խփել, որը ցույց է տալիս անկլիկէլք ծառի տեղը:

Այն հողամասում, որի ռելեֆը հարթ չէ, հատակագծումը կարելի է կատարել տեղադրաման միջոցով: Այս աշխատանքը կատարվում է 3 բանվորով: Առաջին հերթին ցցերի միջոցով պետք է նշել հողամասի սահմանները: Այդ ցցերի հեռավորությունը մեկը մյուսից պետք է համապատասխանի ծառերի միջչարքային և միջրույսային տարածություններին: Հետևյալ շարքերի և ծառերի տեղերը նշվում են այս ձևով. 2 բանվոր, որոնք դիտողներ են հանդիսանում, շարժվում են հողամասում իրար ուղղահայաց կողմերի ուղղությամբ, իսկ երրորդ բանվորն այդ ուղղությունների հատման տեղում խփում է ցիցը, որը ցույց է տալիս ծառի տեղը: Այս ձևով էլ կատարվում է ամբողջ հողամասի հատակագծումը:

Բնավոր պլանտացիաներում շարքերի, ինչպես և բույսերի հեռավորությունն իրարից պետք է լինի 3 մետր, թիսածև պլանտացիաներում՝ շարքը-շարքից 3 մետր և բույսը-բույսից՝ մեկ մետր:

Հողամասի հատակագծումից հետո պետք է փոսեր փորել՝ հողային պայմաններին համապատասխան (այդ աշխատանքը կատարել անկումներից մի քանի շարքից առաջ):

Բնավոր թթենիներ անկելու համար, փոսերը պետք է փորել 50—60 սանտիմետր խորությամբ և 80—100 սանտիմետր տրամագծով:

Փոսը փորելու ժամանակ վերին շերտի հողը պետք է լցնել մի կողմ, իսկ ցածի շերտի հողը՝ մյուս կողմ: Այս արվում է այն նպատակով, որպեսզի ծառը անկելու ժամանակ հնարավոր լինի երեսի շերտի հողամասերից հողը լցնել արմատների մոտ, իսկ ներքևի շերտի անկելի աղքատ հողը լցնել փոսի երեսին, որպեսզի հնարավոր լինի հետագայում պարբերաբար մշակելով հարստացնել այն:

ԲՆԱՎՈՐ ԹԹԵՆՈՒ ՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ՏՆԿՈՒՄԸ

Թթենու տնկիները աչնանը պետք է տնկել տերե-
վաթափից հետո և վաղ դարնանը մինչև բողբոջների
ուռչելը: Աչնանը թթենու տնկիների տնկումները պետք
է կատարել կայուն սառնամանիքները սկսվելուց 10—15
օր առաջ:

Գարնանը պետք է տնկել որքան կարելի է շուտ,
քանի որ ուշ տնկված տնկիները վնասվում են ջրի ու-
ժեղ գոլորշիացման հետևանքով, նոր տնկված ծառի
արմատային սխտեմը հնարավորութուն չի ունենում
բավարարել բույսի կողմից պահանջվող ջրի և սննդի
քանակը, այսպիսով խանգարվում է ջրի բալանսը և
տնկիները չորանում են: Բնավոր թթենու պլանտացիան
տնկվում է շարքը-շարքից 3 մետր, բույսը-բույսից 3
մետր հեռավորությամբ: Տնկելուց 10—15 օր առաջ
փոսի երկու երրորդ մասը պետք է լցնել հողով՝ փոսի
հատակը լցնելով վերևի պարարտ հողով:

Տնկարանից ստացված տնկանյութը, նախքան արն-
կելը, պետք է ստուգել և ժամանակավորապես թաղել
խոնավ հողում: Եթե նկատվի որ տնկիները թառամել
են կամ մի քիչ ցամաքել ու արմատները դունավորի-
վել, այդ դեպքում պետք է ջրում պահել 1—2 օր, որից
հետո թաղել կամ տնկել:

Նախքան տնկելը պետք է ստուգել արմատային
սխտեմը և հեռացնել արմատների կոտրված և վնաս-
ված մասերը, նաև կտրել գլխավոր արմատի ծայրերը,
այնպես, որ նրա երկարությունը հասնի 25—30 սանտի-
մետրի:

Տնկելու աշխատանքը կատարվում է երկու բանվո-
րով, նրանցից մեկը տնկին բռնում է փոսի մեջ և պահ-
պանում է ուղղությունը, իսկ մյուսը՝ հողը լցնում
տնկու մասների վրա:

Տնկիները պետք է տնկել այնպես, որ նրանց ար-
մատավզիկը հողի մակերեսից 3—5 սանտիմետր բարձր

լինի և այն հաշիւով, որ հողը նստելուց հետո արմատավզիկը հավասարվի հողի մակերեսին: Հողը լցնելու ընթացքում տնկին պետք է թեթևակի կերպով շարժել և թափ տալ, վեր քաշել բնից, որպեսզի նրա արմատները փոստում լայլ դասավորվեն և հողը անցնի արմատների առանցքներին: Այնուհետև հողը ոտներով պետք է ամուր տրորել, փոսի եզրից դեպի ներս՝ դեպի բունը: Տնկելուց հետո պետք է տնկիի շուրջը բաժակ պատրաստել և անմիջապես ջրել: Չուրը նպաստում է հողի ամուր միացմանը արմատներին և նրանց տարածման միջավայրում ստեղծում է խոնավ պայմաններ՝ նպաստելով նրանց կաշելուն և հետագա զարգացմանը: Ամեն անգամ ջրելուց հետո, հողը քեշի դալուց հետո, բաժակները պետք է փխրեցնել:

Չորացած թթենու ծառերի տեղը պետք է տնկել նորերը: Վերատնկման ենթակա ծառերի փոսերը պատրաստել տնկելուց երկու շաբաթ առաջ, տնկել ժամանակին և նրանց նկատմամբ նույն խնամքը տանել, ինչ պահանջվում է նորատունկ թթենու պլանտացիայի համար:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՇԱՐԲԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԷՆՐԹԱԿԱՆ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Սկզբնական տարիներում, երբ թթենու պլանտացիաներում ծառերը դեռևս լրիվ չափով չեն զբաղեցնում իրենց հատկացված ամբողջ տարածութունները, այդպիսին կարելի է օգտագործել ուրիշ կուլտուրաների տակ:

Այդ կուլտուրաները մի կողմից տնտեսությանը կտան լրացուցիչ եկամուտ, իսկ մյուս կողմից թթենու տնկարքերի համար կստեղծեն բարենպաստ պայմաններ՝ լայնացնելով հողի ստրուկտուրան և հարստացնելով այն սննդանյութերով:

Թթենու պլանտացիայի միջարքային տարածու-

Թյունները կարելի է գրադեցնել բանջարանոցային, բոստանային և դաշտավարական կուլտուրաներով:

Միջարքային տարածություններում ցանվող այլ կուլտուրաները թթենու ծառերի հետ պետք է ջրի նույնանման պահանջ ունենան:

Արգելվում է մշակել ուշ ջուր պահանջող բույսերը (օր. ուշահաս կաղամբ): Ծառերի խնամքին չխանգարելու համար բանջարանոցային և դաշտավարական կուլտուրաները ցանվում են հիմնական թթենիների չարքերից մեկական մետր հեռավորության վրա:

Տարիների ընթացքում, աստիճանաբար, միջարքային տարածություններում մշակվող կուլտուրաների տարածությունը պակասեցվում է, որպեսզի չարգելակի ծառերի նորմալ զարգացումը:

Հողի, համապատասխան մշակումը խոշոր նշանակութուն ունի թթենու ծառերի նորմալ զարգացման համար: Եթե միջարքային տարածությունը թողնված է որպես սև ցել, ապա տարվա ընթացքում թթենու պլանտացիաներում պետք է կատարվեն հետևյալ աշխատանքները. աշնանը, ոչ ուշ քան դեկտեմբերի 1-ը, միջարքային տարածությունը պետք է վարել 18—20 սմ. խորությամբ կամ համատարած փորում կատարել ձեռքով և կրկնավարել դարնանը, մինչև թթենու ծառերի բողբոջների բացվելը: Բացի դրանից, ամառվա ընթացքում փխրացնել 3—4 անգամ, որից մեկը՝ խոր փխրեցումը կատարել ծառերի շուրջը, թթենու տերևի օդաաղործումից հետո, բայց ոչ ուշ քան 10 օրվա ընթացքում: Աշնան վարը նպաստում է հողի լավ անրացիային և խոնավության կուտակմանը, նաև արմատային սիստեմի պահպանմանը:

Թեք լանջերում միջարքային տարածությունների հողը լվացումից ապահովելու համար, անհրաժեշտ է ձմավորել և, հնարավորության սահմաններում, ամեն տարի մեկական փոցխում կատարել:

Աշնանը ծառերի շուրջը պետք է փորել 12—16 սմ. խորությամբ, դարնանը մինչև ծառերի բողբոջները

բացվելը հողը խոր փխրեցնել և նույնը ամառվա ընթացքում կրկնել 3—4 անգամ, որից մեկ փխրեցումը կատարել թթենու տերևները օգտագործելուց հետո:

ԱՌՈՑՈՒՄ

Չորային շրջաններում թթենու ծառերի զարգացման և նրանց տերևի բերքատվության բարձրացման համար մեծ նշանակություն ունի ոռոգումը: Տարբեր հողեր՝ ջրի տարբեր կլանողականություն ունեն ստրուկտուրային հողերը մթնոլորտային տեղումներն ավելի լավ են կլանում, քան փոշիացած և ավազային հողերը: Փոշիացած հողերը շատ քիչ քանակով են ջուր կլանում, մնացածը հողի մակերեսով հոսում է, իսկ ավազային հողերում ջուրը ներծծվում է խոր շերտերը:

Բույսերը ջրով մասամբ կարելի է ապահովել հողում՝ վարի, փխրեցման միջոցով՝ մթնոլորտային տեղումները (անձրևներ և ձյուն) կուտակելով:

Հայաստանի համարյա բոլոր վայրերում անհրաժեշտ է կիրառել արհեստական ոռոգում: Թթենու պլանտացիաների ոռոգման ամենալավ ձևը ակոսներով ոռոգելն է: Այս ձևով ջուրը հողի մեջ թափանցում է թե խորությամբ և թե հորիզոնական: Եթե ստորերկրյա ջրերը մոտ են և աղիացած, պետք է հետևել, որ գրանջ չբարձրանան և չաղիացնեն հողը: Պետք է ոռոգել այնպես, որ հողի այն շերտը, որտեղ տարածված է սբմատային սխտեմը, ջրով հազենա:

Թեք լանջերում ոռոգման առուները պետք է կառուցել՝ թեքությանը ուղղահայաց կամ հորիզոնական ձևով:

Օգտագործվող թթենու պլանտացիաները պետք է ոռոգել 6—8 անգամ, իսկ նորաստուկի պլանտացիաները՝ հաճախ, բայց ավելի քիչ նորմաներով: Ջրելու ժամկետները կախված են հողային և կլիմայական պայմաններից: Առաջին ջուրը պետք է տալ վաղ գարնանը,

մինչև բողբոջների բացումը (այս ջուրը նպաստելու է բողբոջների միահավասար բացմանը), երկրորդ ջուրը՝ բողբոջները բացվելուց հետո, բայց ոչ ուշ, քան 10—15 օրվա ընթացքում, երրորդ ջուրը տրվում է հունիսի սկզբներին (այս ջուրը ապահովում և ուժեղացնում է տերևների զարգացումը), չորրորդ ջուրը (որը պարտադիր է համարվում), պետք է տրվի թթենու ծառերի տերևները լրիվ օգտագործելուց հետո, բայց ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում (այս ջուրը նպաստում է թթենու ծառերի աճմանը և երաշխիք է մյուս տարվա տերևի լավ և բարձր բերք ստանալուն: Հինգերորդ ջուրը տրվում է 15—20 օր հետո (ուշ աշնանային ջուրը տրվում է տերևաթափից հետո մինչև հողի սառչելը): Այս ջուրն անհրաժեշտ է նամանալանդ չոր աշնան դեպքում և չորային չրջաններում, որտեղ ձյան շերտերը բարակ են լինում և ծառերը տուժում են հողը ցամաքելուց: Ոռոգման նշված այս ժամկետները չպետք է բացասեն լրացուցիչ միջանկյալ ոռոգումների հնարավորութունը, որոնք կատարվում են՝ նայած տարվա օդերեվուլթաբանական պայմաններին:

ԲՆԱՎՈՐ ԹԹԵՆՈՒ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Աշնանը և դարնանը տնկված թթենու պլանտացիաներում, թթենիները անհրաժեշտ է ձևավորել. տնկարանում կազմակերպված 3 հիմնական սաղարթի ճյուղերը դարնանը պետք է կտրել 40 սանտիմետր բարձրության վրա: Ամառվա ընթացքում դրանց վրա դուրս եկած կողքի բոլոր շիվերը հիմքից կտրել, թողնելով յուրաքանչյուր հիմնական ճյուղերի, ծայրին միայն 2-ական շիվ՝ 2-րդ աստիճան ստեղծելու համար: Եթե հիմնական 3 ճյուղերի վրա թողնված 2-ական ճյուղերը 25—30 սմ. բարձրության վրա ունենում են 5—6 սմ. հաստություն, այդ դեպքում նույն բարձրության վրա ճյուղերի ծայրերը պետք է կտրել, որով կազմակերպվում է սաղարթի երկրորդ աստիճանը: Հետագայում

այդ ճյուղերի վրա դուրս եկած միամյա ճյուղերը պետք է կտրել 1—1,5 սմ. բարձրությամբ (այսպիսով ստացվում է 6 բուռնկանի սաղարթ) և օգտագործել չեքամի որդերի կերակրման համար:

Հետագա տարիներում թթենու ծառը որդի կերակրման ժամանակ օգտագործելիս, կտրել այդ 6 հիմնական ճյուղերից դուրս եկող միամյա շիվերը՝ թողնելով հիմքում 1—1,5 սմ., միաժամանակ հիմքից կտրել բնի վրա աճած և առաջին ու երկրորդ աստիճանի հիմնական ճյուղերից:

Եթե բնավոր թթենու պլանտացիան տնկված է չպատվաստած տունկիներով, անհրաժեշտ է (զազաթի) սաղարթի 3 հիմնական ճյուղերը պատվաստել 5—8 սմ. բարձրության վրա: Աչքապատվաստը կատարել ամառը՝ հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը, կամ մյուս տարի դարնանը ծառերի հյուսիսարևմտյան ժամանակ, այն է՝ մայիսի առաջին կեսին: Աչքապատվաստի տեխնիկական և հետագա խնամքը նույնն է, ինչ որ տնկաբանում աչքապատվաստի նկատմամբ ունեցածը, իսկ ձևավորումը՝ կատարվում է ձևավորման ընդհանուր կարգով:

ԹԹԵՆՈՒ ԹՓԱԶԵՎ ՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ՏՆԿՈՒՄԸ

Թվաձև թթենու պլանտացիաների համար նախատեսված հողը պետք է թեթև լինի, մաքուր, սնդանյութերով հարուստ, քարերից ու մոլախոտերից ազատ, մակերեսը հարթ և ջրով ապահովված:

Պլանտացիայի հողը պետք է վարել աչնանը 30—35 սմ. խորությամբ: Գարնանը, տնկելուց առաջ, հողամասում կրկնավար կատարել 18—20 սմ. խորությամբ, այնուհետև փոցխել, հողը հարթել և մաքրել քարերից ու մոլախոտերից: Միջարքային տարածությունները մեքենայացման ենթարկելու նպատակով, շարքերի ուղղությունը պետք է միատեսակ լինի՝ ուղղադիժ, իսկ միջարքային տարածությունը, բոլոր դեպքերում, միևնույն լայնությունն ունենա:

Թփաճև պլանտացիայի միջարքային տարածությունը պետք է լինի 3 մետր, իսկ բույսը բույսից մեկ մետր հեռու. այսպիսի տնկման դեպքում մեկ հեկտարում տնկվում է 3340 բույս:

Թփաճև պլանտացիաները տնկվում են առաջին տեսակի ստանդարտ բուսակներով: Բուսակները պետք է տնկել վաղ գարնանը՝ մինչև բույսերի հյուսիսարևմտյանը, իսկ աշնանը, տերևաթափից՝ հետո, մինչև ցրտերն ընկնելը: Նախքան տնկելը, բուսակների արմատներն ազատել վիրավոր մասերից և առանցքային արմատը թողնել 20 սանտիմետրից ոչ պակաս երկարությամբ:

Տնկել կարելի է տնկող ձողով կամ բահով. տնկող ձողով տնկելու ժամանակ աշխատում են երկու հոգով, — նրանցից մեկը ձողով հողում, փոս է բացում 22 սմ. խորությամբ, իսկ երկրորդը փոսում դնում է բուսակը, ոտքով ամրացնում և ստուգում շարքերի ուղղությունը. բուսակը տնկել այնպես, որ արմատա՝ վիզը հավասար լինի հողի մակերեսին:

Բահով տնկելու ժամանակ, մեկ բահի խորությամբ պետք է ուղիղ շարքերով փոսեր, փորել և հողը լցնել աջ ու ձախ կողմը:

Տնկելու ժամանակ ձախ ձեռքով բռնել բուսակը փոսի մեջ հողին ուղղահայաց, աջ ձեռքով փոսի մեջ լցնել կողքի հողն այնպես, որ նա լայն դասավորվի արմատների արանքում, այս ծածկել ամբողջ արմատային սիստեմը. տնկելուց հետո հողն ամրացնել ոտքերի ծայրերով:

Տնկման ժամանակ բուսակները պահել կողովում կամ դուլլի մեջ և արմատները ծածկել խոնավ շորով:

Տնկելիս ստուգել, որ շարքերը ուղիղ լինեն. տնկելուց անմիջապես հետո ջրել: Թփենու թփաճև պլանտացիայի հողի մշակումը, միջարքային կուլտուրաների հերթական դասավորումն ու ոռոգումը նույնն է, ինչ որ նախատեսված էր բնավոր պլանտացիայի նրկատմամբ:

ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

ԹԹԵՆՈՒ ԹՓՍՁԵՎ ՊԼԱՆՏԱՑԻԱՑՈՒՄ

Տնկելուց հետո տունկի ցողունը (բունը) կտրել հողի մակերեսից 20 սմ. բարձրությամբ: Երբ 20 սմ. բարձրությամբ թողած տունկի վրա նոր երիտասարդ շիվերը հասնեն 12—15 սմ. բարձրության, դրանցից ընտրել և թողնել 3 ամենաուժեղները, որոնք լինելու են ապագայի հիմնական ճյուղերը, իսկ մնացածները հիմքից կտրել:

Եթե թողած 3 ճյուղերը անհավասար են աճում, ապա, վեղետացիայի 2-րդ կեսում, հիմնական ճյուղերի աճեցողությունը հավասարեցնելու նպատակով, ուժեղ աճող ճյուղերի ծայրերը ծեբատել:

Տնկման 2-րդ տարին, դարնանը, մինչև հյուսիս-չարժությունը սկսվելը, մաքրել 3 հիմնական ճյուղերի վրա դուրս եկած կողքի շիվերը մինչև 50 սմ. բարձրությամբ՝ հողի մակերեսից հաչված:

3 հիմնական ճյուղերը 50 սմ. բարձրության վրա կտրել, եթե նրանց հաստությունը հիշյալ բարձրության վրա հասնում է 2—3 սմ-ի:

Հետագա տարիներում, տերևը օդատազործելու ժամանակ, կտրել հիմնական ճյուղերի ծայրերից դուրս եկած բոլոր շիվերը, թողնելով 1—1,5 սմ., իսկ բոլոր այն շիվերը, որոնք դուրս են եկել հիմնական ճյուղերի կողքից ու արձատալիցից՝ հիմքից կտրել: Այսպիսով ստացվում է 3 բունցքային թուփ:

Թիփածև պլանտացիայի առավելությունը կայանում է նրանում, որ շահագործման է հանձնվում 3—4-րդ տարում:

ԹԹԵՆՈՒ ԽԱՌԸ ՊԼԱՆՏԱՑԻԱՑԻ ՏՆԿՈՒՄԸ

Թթենու խառը պլանտացիայի հողի ընտրությունը, մշակումը, միջչարքային կուլտուրաների հերթաձ

կան դասավորումը և խնամքը նույնն է, ինչ որ նախատեսված է բնավոր և թփածկ պլանտացիաների համար:

Սառը պլանտացիան տարբերվում է բնավոր և թփածկ պլանտացիաներից նրանով, որ այդ պլանտացիան տնկվում է բնավոր տնկիներով և բուսակներով խառը՝ պաշտպանելով տնկման հաջորդականությունը և շարքերի ուղղությունը:

Սառը պլանտացիան տնկվում է շարքը-շարքից 3 մետր, բույսը-բույսից 1 մետր հեռավորությամբ, կարելի է տնկել նաև շարքը-շարքից 4 մետր, բույսը-բույսից 1 մետր հեռավորության վրա:

Սառը պլանտացիան տնկվում է հետևյալ հաջորդականությամբ. շարքը-շարքից 3 մետրի դեպքում՝ շարքի սկզբում տնկել մեկ բնավոր տնկի, որից հետո 2 բուսակ, նորից մեկ բնավոր տնկի, ևս 2 բուսակ ու այս հաջորդականությունը շարունակել մինչև շարքի վերջը և հողափասի տնկումն աշարտելը:

Սյս ձևով տնկելիս մեկ հեկտարի վրա տեղավորվում է 1115 բնավոր տնկի և 2225 հատ բուսակներ, ընդամենը՝ 3340 հատ բույս:

Շարքը-շարքից 4 մետր: Հեռավորության վրա տնկելու դեպքում, մեկը տնկվում է բնավոր տնկի, 3-ը բուսակ. այսպիսով մեկ հեկտարի վրա տնկվում է 2225 հատ բույս, որից բնավոր տնկի՝ 625 հատ և բուսակներ՝ 1600 հատ:

Փոսերի փորելը, տնկման ժամկետը, բնավոր տնկիներին և բուսակներին ձևավորումը նույնն է, ինչ որ պահանջվում է բնավոր և թփածկ պլանտացիաների համար:

ԿՈՄՊԱԿՏ-ԳԾԱՅԻՆ ԵՎ ՀԱՏԱՏՆԿՈՒՄՆԵՐ

Կոմպակտ-գծային և հատատնկումները կատարվում է այն հաշվով, որ թթենու ծառերի ցրվածությունը չառաջանա և շերամի որդերի կերակրման շրջ-

Չանում հեշտ լինի նրանց օգտագործումն ու տեղափոխումը: Հատատնկումները կարելի է կատարել բոլոր տեսակի առուների ափերին, տնամերձ հողամասերում և այգիների շուրջը:

Մագիստրալ և այլ առուների ափերին տնկել՝ տընկին-տնկիկից 2 մետր հեռավորության վրա, իսկ մանր առուների, տնամերձ հողամասերի և այգիների շուրջը տնկել 3 մետրի վրա: Առուների ափերին տնկելիս պետք է հաշվի առնել առվի մեջ հոսող ջրի բարձրությունը և հողի խոնավանալու հնարավորությունները՝ ծառերի արմատների տարածման տեղերում:

Հողի մշակությունը, խնամքը և ծառերի աչքապատվաստումը-ձևավորումը կատարվում է նույն ձևով, ինչ որ բնավոր պլանտացիաներում:

ԹԹԵՆՈՒ ՀԻՆ ԾԱՌԵՐԻ ԽՆԱՄԻՐԸ

Բարձրարուն հատատունի թթենու ծառերի տերևի բերքատվությունը բարձրացնելու նպատակով, անհրաժեշտ է առաջին հերթին նրանց ապահովել ջրով, օրինակելի խնամքով և պարարտանյութով:

Ամբողջ վեգետացիայի ընթացքում ծառերի բների շուրջը բահով փորել 2 մետր շառավիղով 18—20 սմ. խորությամբ: Նույն ժամանակամիջոցում ծառերի շուրջը փորել 2 անգամ՝ մեկ անգամ աչնանը, մեկն էլ, պարտադիր կարգով, ծառի օգտագործելուց հետո, բայց ոչ ուշ քան 10 օրվա ժամանակաշրջանում. բայց դրանից վեգետացիայի ընթացքում փխրեցում կատարել 3 անգամ: Թթենու ծառերը ջրել 5 անգամ ից ոչ պակաս, որից մեկ ջուրը տալ տերևի օգտագործումից հետո, բայց ոչ ուշ քան 10 օրվա ընթացքում: Շերամի որդի կերակրման ընթացքում ծառերի սաղարթը մաքրել կոտրատված, չորացած և հիվանդ ճյուղերից: (Թթենու ծառերի պարարտացումը՝ տես պարարտացման գլուխ):

ԹԹԵՆՈՒ ԾԱՌԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՈՒՄ ԵՎ,
ՍԱՂԱՐԹԻ ՎԵՐԱԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հասակավոր, հիվանդ, և ցածր տերևատու թթենու ծառերի երիտասարդացումը և վերաճևավորումը կատարվում է՝ վաղօրոք հաշվի առնելով այդպիսի ծառերի քանակը: Խոլոր դեպքերում այդ աշխատանքը կատարվում է պլանային կարգով՝ համաձայնեցնելով տեխնիկական կուլտուրայի բաժնի և շրջմետաքսի հետ, այն հաշվով, որ չանդրադառնա շերամապահության զարգացմանը և չպակասի բաշխվող գրենայի տուփերի քանակը:

Երիտասարդացման ենթակա ծառերի հիմնական ճյուղերը փոքր, թեքությամբ կտրել անմիջապես բուռնցքի տակից սուր սղոցով, կտրվածքը լավ մաքրել այդու դանակով և մածիկով ծածկել: Եթե բուռնը փչակ ունի և այդ փչակը գտնվում է հողի երեսից մեկ մետրից բարձր, այդ դեպքում կտրել փչակի ներքևից, իսկ երբ փչակը մեկ մետրից ցածր է՝ ծառի բուռնը կտրել հենց արմատավզից (գետնի երեսից)։ (Երկու դեպքում էլ այդ աշխատանքը կատարել վաղ դարնանը՝ փետրվար, մարտ ամիսներին):

Ծառերի վերաճևավորման ժամանակ անհրաժեշտ է թողնել 3—4 աստիճանի սաղարթ, բայց ոչ պակաս 2 աստիճանից: Հազվադեպ դեպքում, եթե ծառի սաղարթն ունենում է երեք մետրից ավելի երկար ճյուղեր, այդ դեպքում անհրաժեշտ է հիմնական ճյուղերը մինչև սաղարթի առաջին աստիճանը մեկ մետր բարձրությամբ կտրել:

Երիտասարդացրած և վերաճևավորված թթենու ծառերից ոչ մի դեպքում թույլ չի տրվում առաջին տարում վերցնել տերևը՝ որդերի կերակրման համար:

Երիտասարդացրած և վերաճևավորված ծառերի սաղարթը հիմնել 2-րդ տարում շերամի որդերի կերակրման շրջանում: Կտրած տեղերից դուրս եկած ճյուղերից ընտրել 3 լավ զարգացած ու տարբեր ուղ-

դուժյամբ դասավորված ճյուղեր և այդ ճյուղերը կտրել 40 սմ. բարձրութեան վրա, թողնելով յուրաքանչյուր կտրած ճյուղի ծայրին 2-ական ճյուղ՝ երկրորդ աստիճան ստեղծելու նպատակով: Ձևավորման շարունակութունը նույնն է, ինչ, որ բնավոր պլանտացիաներում:

Այն ծառերը, որոնք պատվաստած չեն, բերքավորութունը ցածր է և տերևները ուժեղ բլթակավոր, անհրաժեշտ է պատվաստել այնպես ինչպես պատվաստվում են ծառերը բնավոր պլանտացիաներում:

ԹԹԱՍՏԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Շերամի որդերի կերակրման ժամանակ թթենինները միանգամից չօգտագործել, այլ օգտագործել աստիճանաբար: Որդի 1-ին և 2-րդ հասակներում օգտագործել թփածև ծառերի բնի և նրանց բուռնցքների վրա դանակով բոլոր մանր և ավելորդ ճյուղերի տերևները՝ առանց ճյուղերին, բողբոջներին և կեղևին վնասելու, սրկել նաև բնավոր ծառերի բնից դուրս եկած ճյուղերի տերևները:

Որդերի կերակրման 3-րդ հասակում օգտագործել թփածև ծառերի բուռնցքների վրա դանակով ճյուղերը՝ կտրելով նրանց 1—1,5 սմ. բարձրությամբ, իսկ բնավոր ծառերի բների ու սաղարթի միջին մասի մանր ճյուղերը հիմքից կտրել:

Որդերի կերակրման 4-րդ և 5-րդ հասակներում աստիճանաբար կտրել բնավոր ծառերի սաղարթի հիմնական ճյուղերի վրա դուրս եկած միամյա շիվերը և վերջին հասակում՝ կտրատել բոլոր միամյա շիվերը՝ թողնելով 1—1,5 սմ. բարձրությամբ:

Թթենու ծառերն օգտագործելուց անմիջապես հետո ուղղել սաղարթը: Եթե օգտագործման ժամանակ կանոնավոր չեն կտրվել և մնացել են ավելորդ մասեր կամ ճյուղեր, այդպիսիք անհրաժեշտ է կանոնավոր կտրել և թողնել միայն հիմնական ճյուղերի բուռնցք

ների վրա 1—1,5 սմ. բարձրութեամբ բուխակ, որից հետադա տարում կղարդանան փարթամ շիվեր:

Թթենու օգտագործման, երիտասարդացման, ձևավորման ընթացքում ծառերի կտրվածքները պետք է կատարել այնպես, որ ոչ մի վնաս չհասնի հիմնական ճյուղերին, չկոտորել ճյուղերը, կեղևը չպոկել և վերքեր չառաջացնել: Թթենու բարակ ճյուղերը կտրել այդու սուր դանակով կամ սեկատորով, իսկ հաստ ճյուղերը այդու սղոցով: Բոլոր տեսակի ճյուղերի կտրվածքը պետք է թեք լինի, հակառակ դեպքում անձրևի կաթիլների կուտակումից կտրվածքում փտում է առաջանում: Սղոցով կատարված կտրվածքը պետք է հարթել այդու սուր դանակով:

Երեք սանտիմետր և ավելի հաստութուն ունեցող ճյուղերի կտրվածքները պետք է ծածկել Փարսիդի կամ Շավրովի մածիկով:

Փարսիդի մածիկի կազմութունն է՝ 2 մաս տավարի թարմ աղբ, 1 մաս կիր կամ դաջ:

Շավրովի մածիկի կազմութունն է՝ 50 մաս տավարի թարմ աղբ, 20 մաս կիր, 29,9 մաս փայտի մոխիր և 0,1 մաս կայծաքարի ավազ:

ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՐՔՆԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

Թթենու ծառերի նորմալ զարգացման և տերևի բարձր բերք ստանալու տեսակետից, հողի մշակման հետ միասին, մեծ նշանակություն ունի նաև հողի պարարտացումը: Թթենու տնկարքները կարելի է պարարտացնել ոչ միայն օրգանական (գոմաղբ և այլն), այլև հանքային (ազոտական, ֆոսֆորական և կալիական) պարարտանյութերով: Օրգանական պարարտանյութ օգտագործելու դեպքում, ավելի լավ է ֆեկտ է ստացվում, որովհետև բույսը սնման համար ստանում է բոլոր անհրաժեշտ նյութերը՝ ազոտ, ֆոսֆոր, կալի և այլ նյութեր, միաժամանակ լավանում են հողի ֆիզիկական հատկությունները: Թթենու պլանտացիաներում

որպես օրգանական պարարտանյութ օգտագործում են՝
գոմաղբը, կոմպոստը (կարելի է գործադրել նաև տիղ-
մը) :

Հանքային պարարտանյութերից ամենից արժեքա-
վորն է ազոտը, որը համարյա բոլոր տեսակի հողե-
րում մեծ էֆեկտ է տալիս: Ազոտը բաղմակողմանի
ազդեցություն է թողնում ծառերի աման ու զարգաց-
ման վրա: Նա ուժեղացնում է շիվերի և տերևների աճը:

Ազոտային պարարտանյութն ավելի մեծ էֆեկտ է
տալիս ֆոսֆորի և կալիումի միասնության դեպքում:
Տրվող պարարտանյութերի նորման կախված է հողի
տեսակից, ծառի հասակից և միջարքային տարածու-
թյունների օգտագործումից:

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Թթենու պլանտացիաներն, ինչպես և հատատունի
ծառերն անհրաժեշտ է քիմիական պարարտանյութով
պարարտացնել վեգետացիայից մեկ ամիս առաջ, հա-
կառակ դեպքում՝ մինչև վեգետացիայի սկիզբը:

Օրգանական պարարտանյութերն, ամեն դեպքումն
էլ, մացրվում են աչնանը՝ ցրտահերկի ժամանակ և
ծառերի բների շուրջը՝ աչնան փորի ընթացքում:

Մեկ հեկտար պլանտացիային պետք է տալ հետե-
վյալ քանակությամբ հանքային պարարտանյութ.

- | |
|---|
| ա) Ազոտային (ամոնիում սուլֆատ) 20 տոկ. 600 կլգ. |
| բ) Փոսֆորային (սուպերֆոսֆատ) 18 տոկ. 500 կլգ. |
| գ) կալիումի աղ 60 տոկ. 100 կլգ. |

Քիմիական պարարտանյութերի յուրաքանչյուր
տեսակը, կշռելուց առաջ, պետք է առանձին-առանձին
լավ մանրացնել, մաղել 2—3 միլիմետրանոց մաղով,
կշռել, խառնել իրար հետ, որից հետո ավելացնել 1:5
հարաբերությամբ մաքուր հող (1 մաս պարարտանյութ
5 մաս հող) և նորից լավ խառնել: Թթենու պլանտա-

ցիաները պարարտացվում է ակոսներով, որի համար անց է կացվում ակոսներ՝ մեկ ձիու գութանով կամ բահով՝ 18—20 սմ Վ խորությամբ և շարքից 20—30 սմ. հեռավորության վրա, պարարտանյութի խառնուրդը հավասարաչափ չաղ է տրվում ակոսի մեջ ու ծածկվում հողով:

Գոմաղբով պարարտացնելիս մեկ հեկտարին տրվում է 50—60 տոննա: Գոմաղբը պետք է չաղ տալ միջշարքային տարածություններում հավասարաչափ և անմիջապես հողը վարում 20 սմ. խորությամբ:

Բնավոր թթենիները, որոնց բնի հաստությունը մեկ մետր բարձրության վրա 5—25 սանտիմետր է, մեկ ծառի բնի շուրջը տրվում է հանքային պարարտանյութ:

ա) Ազոտային (ամոնիում սուլֆատ) 20 տոկ. 0,6 կլգ.
բ) Ֆոսֆորային (սուպերֆոսֆատ) 18 » 0,5 »
գ) Կալիումի աղ 60 » 0,1 »
Ընդամենը՝ 1,2 կլգ.

Բնի հաստությունը 25 սմ. ավելի լինելու դեպքում, մեկ ծառին պետք է տալ պարարտանյութ:

ա) Ազոտային 20 տոկ. 1,2 կլգ.
բ) Ֆոսֆորային 18 տոկ. 0,8 »
գ) Կալիումի աղ 60 տոկ. 0,2 »
Ընդամենը՝ 2,2 կլգ.

Նշված տեսակի հանքային պարարտանյութեր չունենալու դեպքում, կարելի է օգտագործել տեղում եղած պարարտանյութը, ելնելով հետևյալ հաշվառքից՝ մեկ ծառի բնի շուրջը, որն ունի մինչև 25 սմ. հաստություն, մտցնել մաքուր ազոտ 300 գրամ, ֆոսֆոր 150 գրամ և կալիում 150 գրամ:

Մեկ ծառի շուրջը, որի բնի հաստությունը 25 սմ. ավել է, մտցնել պարարտանյութ՝ մաքուր ազոտ 450 գրամ, ֆոսֆոր՝ 225 գրամ, կալիում՝ 225 գրամ: Եթե

ԹԹԵՆՈՒ ԾԱՌԻ ԸՆԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆՔ ԺԻՆԶԷ 25 սմ. է,
այդ դեպքում մեկ ԹԹԵՆՈՒ ԾԱՌԻ ԸՆԻ շՈՒՐՉՔ մտցրվում
է գոմաղբ՝ 0,5 ցենտներ, իսկ ընի հաստուծյունը 25
սմ.՝ ամելի լինելու դեպքում՝ մեկ ցենտներ գոմաղբ:

Հանքային պարարտանյութերը և գոմաղբը հավա-
սարաչափ պետք է շաղ տալ ծառի ընի շՈՒՐՉՔ 1,5—2
մետր շառավիղով, ընից 30—35 սմ. հեռավորության
վրա և բահով փորել 18—20 սմ. խորությամբ՝ մտցնե-
լով գոմաղբը և քիմիական պարարտանյութերը հողի
տակ ու ջրել:

Գոմաղբով պետք է պարարտացնել աշնանը կամ
ծառերի տերևի օգտագործումից հետո, իսկ հանքային
պարարտանյութերով՝ վաղ դարնանը, մինչև վեգետա-
ցիայի սկիզբը:

ԹԹԵՆՈՒ ՏՆԿԱՐՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՎՆԱՍ- ՎԱԾՔՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԵՆ ԲԱԿՏԵ- ՐԻԱԼ ԵՎ ԱՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ԱՅԼ ԲՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԱԶԻՏՆԵՐԻՑ

ա) Բժավորություն.

Այս հիվանդության դեպքում տերևի վրա երևում
է մոխրա-գորշագույն բիծ՝ չրջապատված մուգ-գորշա-
գույն չրջանակով. հիվանդությունը գլխավորապես
վարզանում է հունիսի առաջին կեսերից: Հիվանդու-
թյունը երևալուն պես, հարկավոր է կազմակերպել
հիվանդ ծառերի տերևների օգտագործումն, այլապես
ամբողջ ԹԹաստանը կվարակվի և չերամի որդերը
կմնան առանց կերի: Աշնանը տերևաթափից հետո
անհրաժեշտ է տերևները հավաքել ու այրել:

բ) Բակտերիոզ

Այս հիվանդությունը ԹԹԵՆՈՒ տերևի վրա արտա-
հայտվում է մուգ-գորշագույն բծերով, իսկ շիվերի
վրա սև բծերով, որից վնասվում է շիվերի կեղևը՝
մինչև շիվի միջուկը: Այս հիվանդությունը դեմ պայքա-
րի միջոցներն են. աշնանը տերևները հավաքել ու այ-

րել. վնասված շիվերը շերամի որդի կերակրումից հետո նույնպես աչրել: Որդի գարնանային կերակրումը, հնարավորութեան սահմանում, կաղմակերպել վաղ մինչև շիվերի և տերևների մասսայական վնասվելը:

Հիվանդութեան տարածումը և նրա հասցրած վնասը պակասացնելու նպատակով, հարկավոր է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

1. Սրգելել բակտերիոզով վարակված տնկարաններից չվարակված շրջաններին բուսակներ և տնկիչներ բաց թողնելը:

2. Թթենու պլանտացիաներում անհրաժեշտ է պաշտպանել ծառերի հետևյալ նորմալ խտությունը:

ա) Բնավոր պլանտացիաներում 1115 հատ.

բ) Թփածկ պլանտացիաներում 3340 հատ

գ) Սառ պլանտացիաներում 3×1 մետրի դեպքում 3340 հատ, որից բնավոր տնկի՝ 1115 հատ, իսկ մնացած 2225 հատը՝ թփածկ: 4×1 մետրի դեպքում՝ բնավոր 625 հատ և թփածկ տնկի՝ 1500 հատ:

3. Թթենու պլանտացիաների խնամքը, մշակութային խտությունը— համատարած վարը, փխրեցումը, պարարտացումը, ոռոգումը, կատարել ժամանակին և բարձր որակի:

4. Որդի կերակրման ժամանակ ծառերից միամյա շիվերը կտրելիս և չորուկները մաքրելիս, խուսափել ավելորդ վերքեր առաջացնելուց. կտրվածքները կատարել հարթ՝ չթողնել ավելորդ բուլթակներ և այլն:

5. Պատվաստի համար օգտագործել բացառապես առողջ կտրոններ:

6. Բոլոր տեսակի սնկային հիվանդութայիններից պաշտպանելու նպատակով, թթենու ծառերի վրա եղած բոլոր վերքերը, ճեղքվածքները, փշակները և այլ վնասվածքները հարկավոր է լցնել կավա-կրային խառնուրդով: Ծառերի բներին հարկավոր է քսել կրակավային լուծույթ:

7. Երիտասարդ թթենու ծառերի բներին, քանի դեռ նրանց կեղևը լերկ է և ճեղքվածքներից ազատ,

Հարկավոր է կրակավայրին լուծույթ քսել: Ծառերի խոշոր փչակներն անհրաժեշտ է լցնել այրած աղյուսի մանրուքով և դրսից պատել կրակավայրին շաղախով:

Տ. Հարկավոր է վաղօրոք քերել և հեռացնել թթենու ծառերի բնի, և ճյուղերի վրա առաջացած մամուռն ու քարաքոսիկը, հետո բնին և ճյուղերին քսել կրակավայրին լուծույթ:

ԱՐՄԱՏԻ ՓՏԱԽՏ

Արմատի փտախտ հիվանդությունն արտահայտվում է հետևյալ կերպ. առանց աչքի ընկնող պատճառների, ծառն սկսում է չորանալ, տերևները դեղնում են: Թթենու այս չորացումը երբեմն կատարվում է դանդաղ, երբեմն էլ այնքան արագ, որ բոլորովին առողջ թվացող ծառը մի քանի օրում կարող է չորանալ:

Այս հիվանդությունը երևում է գլխավորապես այնպիսի տեղերում, ուր հողն այնքան խոնավ է, որ ամենատաք եղանակներին անգամ արևի ճառագայթները չեն կարողանում գոլորչիացնել հողի ներքին շերտերում գոյացած խոնավությունը և այնպիսի տեղերում, ուր թթենիները չափից ավելի են ջրվում:

Արմատի փտախտ հիվանդությունն առաջանում է պարազիտային անկից, որը զարգանում է արմատի վրա: Արմատի փտախտ հիվանդությունը առաջացնում է *Armillaria mellea* կամ *Agorieuus melleus* սունկը:

Մսկի միցելիումն իրեն թելերով թափանցում է թթենու արմատների մեջ և տարածվում է կեղևի և բնափայտի մեջ: Միցելյան թելերն ունեն մուգ գույն և ճյուղավորված են թելանման:

Այդ միցելիումից առանձին թելերը մտնում են բնափայտի մեջ և այնտեղից սնվում: Վերջում այդ միցելիումից ծառի արմատավզի մոտ դուրս են գալիս Գլխարկաթնիկեր՝ կազմելով ամբողջ գաղութներ:

Ուժեղ վարակման դեպքում միցելիումն ընդգրկում է ամբողջ արմատային սիստեմը և դրանով կոր-

ծանում ծառը: Միցելիումը գետնի տակով տարածվում է ոչ միայն ծառի արմատից-արմատ, այլև անցնում է հարևան ծառերի արմատներին և վնասում նրանց:

Արմատի փտախտ հիվանդությունն առաջանում է նաև Roselinia agiula սնկից:

Roselina agiela-ները ծառերի արմատները ծածկում են սպիտակ թիթեղներով, որոնք հետագայում տարածվելով արմատի վերին երեսին, կազմում են ծածկոց և աննշան հաստություն են ունենում:

Միցելիումի սպիտակ գույնն աստիճանաբար դառնում է դեղնավուն-մոխրագույն, որը կամաց-կամաց մուգանում է և դառնում մուգ-մոխրագույն կամ ստանում է սև գույն:

Փտախտով վարակված ծառերը չորանում են: Չորացման արագությունը կախված է նրանից թե ծառն ինչ պայմաններում է եղել:

Չոր հողերում ծառերի չորանալու պրոցեսն ընթանում է դանդաղ, ճյուղերը չորանում են մեկը մյուսի հետևից և հիվանդությունը կարող է տևել 3—4 տարի:

Խոնավ հողերում ծառերը երբեմն չորանում են չափ արագ: Արմատները փտած և չորացած ծառը հեշտությամբ է չարժվում և կարելի է տեղափոխ անել:

ԱՐՄԱՏԻ ՓՏԱԵՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Այս հիվանդության ամենավտանգավոր կողմն այն է, որ բացի սաղմնափուջիներով բազմանալուց և վարակելուց, արմատների միջոցով հեշտությամբ անցնում է հարևան ծառին և վարակում նրան, այդ պատճառով էլ, երբ նկատվում է, որ թթաստանում որևէ ծառ հիվանդ է արմատի փտախտով (որպեսզի արմատների միջոցով հարևան թթենիներն էլ չվարակվեն), անմիջապես այս ծառը պետք է առանձնացնել իր շուրջի գտնվող առողջ ծառերից 3,5 մետր հեռավորությամբ և 1—1,5 մետր 2 խորությամբ առունքը բանալ: Այնու-

հետև) հիվանդ ծառն արմատախիլ պետք է անել, հանել հողից բոլոր արմատները, չթողնելով անգամ մի փոքրիկ կտոր և իրեն փոսի մեջ այրել՝ վրան լցնելով որևէ այրող նյութ:

Վարակված հողամասում մի քանի տարի թթենի չպետք է տնկել, այլ պետք է հասցահատիկային բույսեր ցանել:


Ընդհանրապես թթենու պլանտացիաների հողը պետք է լավ մշակել, պաշտպանել նորմալ խտությունը, ավելորդ խոնավությունը վերացնել, ջրել չափավոր, այնպես որ ջուրը կանգ չառնի առունհերում, ջրերու ընթացքում խոնավիել լծացումից:

Արմատի փտախտ հիվանդության դեմ կարելի է պայքարել բիոլոգիական մեթոդով, այսինքն՝ ընտրել թթենու ախտիսի դիմացկուն տեսակներ, որոնց արմատի վրա չեն կարողանում զարգանալ սնկերը և այլ պիսիների վրա պատվաստել կուլտուրական տեսակներ:

ՊԱՅՔԱՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՎՆԱՍԱՏՈՒ ՄԻՋԱՏՆԵՐԻ ԴԵՄ

Թթենու ցանքերում և շկոլաներում (տնկարանի մաս) առչուկներ երեվալու դեպքում, նրանց ոչնչանել՝ հողամասում ցրելով մկնդեղով թունալորված ե՞զիպտացորենի հատիկներ: Այս նպատակի համար մկնդեղի լուծույթում խաշել եզիպտացորենի հատիկները՝ մինչև կակղելը: (Լուծույթը պատրաստել մեկ կիլոգրամ եզիպտացորենի հատիկին 25 գրամ մկնդեղի հարարերուլթյամբ):

Չմեռվա ընթացքում առչուկով վարակված հողամասերում թարմ գոմաղբի կույտեր պատրաստել՝ սառնամանիքների ժամանակ այդ կույտերը ցրել (այս մեթոդով կույտերում հավարված առչուկները սառնամանիքի տակ բաց մնալով ոչնչանում են):



ՎՅ 10717. Գ. 210. Տիրած 1000. տպ. 3,2 մամ.

Ստորագրված է տպ. 25/V-46 թ.

ՀՍՍՐ Մինիստ. Սովետին կից Գոլիգ. և Հրատ. Վարչու.թ. № 1 տպարան,
Երևան,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008430

165

A ^{II}
18551